«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ» ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1923 – 2005թթ.)

Կարեն Խանլարի (Խանլարյան)[1]

Թուրքիայում հայ ժողովրդի դեմ իրականացված պարբերական ջարդերի, բռնի տեղահանումների և, հատկապես, 1915-23թթ. Ցեղասպանության հետևանքները չափազանց խորն են հայ իրականության մեջ: Թուրքիայում մնացած հայ տարրի էթնոկրոնական այլակերպման և վերակերպման իրողության խորքից հառնում է նշված գործընթացների մի կարևոր հետևանք, որն, ըստ էության, ճակատագրական նշանակություն ունի բովանդակ հայ ժողովրդի ներկայի և ապագայի համար:

Այս առումով, թեև համիդյան ջարդերի ազդեցությունների ընդհանուր ոգին նույնանում է Հայոց ցեղասպանության հետ, սակայն չափերի ու ընդգրկման իմաստով 1915-23թթ. Հայոց ցեղասպանությունը բացառիկ է: Հետևաբար՝ հայության մնացորդաց վերակերպման պատմական գործընթացը գերազանցապես անցնում է Թուրքիայի արդի պատմության, Թուրքիայի Հանրապետության ձևավորման բնաշրջման միջով:

Թուրքիայի հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանը 1980թ. Երուսաղեմում ունեցած իր բանախոսության մեջ հետևյալն է ասում գավառահայության մասին. «Ձեզ կներկայացնեմ գավառահայության չորս խավերը, ինչպես որ տեսել եմ նրանց.

- հայեր, որոնք գիտակցաբար և կամավոր կերպով իսլամացել են, խզվել հայությունից և ապրում են թուրքերի մեջ: Սրանք են, որ մինչև միլիոնի են հասնում իրենց թվով:
- հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են և քրդական աշիրեթական ձևերով ապրում են մեկուսի և չեն խառնվում: Խնուսի շրջանում հարյուր ընտանիքներ կան այդպիսիներից, որ գիտեն, թե հայ են, գիտակցաբար իրենց մեջ ամուսնանում են և փափագում են վերադառնալ իրենց պապերի կրոնին, եթե իրենց պայմանները ներեն:

[1] Տեխնիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ, «Դրօշակ» պաշտոնաթերթի խմբագիր:

- կամա թե ակամա իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են և Պոլիս հաստատվելուն պես՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրությունը «էրմենի»-ով են փոխարինում:
- բուն գավառահայերը, որ ի պատիվ իրենց՝ հակառակ բոլոր զգալի և անզգալի դժվարությունների՝ հայ են մնացել, և այսօր Ստամբուլի հայության մեծագույն մասը նրանցից է բաղկանում»[1]:

Թեև Շնորհք պատրիարքի այս տեղեկատվության համեմատ՝ ներկայիս կացությունը փոխված կարելի է համարել, այնուամենայնիվ, դա բավարար հիմք է հանդիսանում «Անատոլիայի» հայությանը առկա փաստերի լույսի տակ տիպաբանական երեք խմբի բաժանելու համար.

ա) «Պաշտոնական» հայություն. այս խումբը Հայ Առաքելական, Կաթողիկե կամ Ավետարանական եկեղեցիներին կապված համայնքների տեսքով գոյատևել է զանազան նահանգներում և ավաններում: «Պաշտոնական» հայության կապը Կ.Պոլսի կազմակերպված հայ համայնքի հետ քիչ թե շատ պահպանվել է մանավանդ պատմական Կիլիկիայում:

բ) «Իսլամացած» հայություն. այս խումբը հիմնականում բաղկացած է պոնտահայ և համշենահայ մանր ու խոշոր տոհմական խմբերից, որոնք բնակվում են սևծովյան ափեզրում՝ պատմական Ջանիկից (Սամսուն) մինչև հայվրացական սահմանները երկարող տարածքներում:

գ) «Թաքուն» հայություն. այս խումբը բռնի կերպով և իր ֆիզիկական գոյությունը պահպանելու հարկադրանքի տակ իսլամացել է՝ հայկական պարբերական կոտորածների ժամանակաշրջանից (1896-1923թթ.) սկսած և ապրում է աշխարհագրական պայմանական չորս տարածաշրջանների բազմաթիվ առանձին, քրդաբնակ և թուրքաբնակ գյուղերում ու գյուղակներում: Սրանք վերոնշյալ «իսլամացած» տեսակից տարբերվում են իրենց իսլամացման ժամանակով և գործընթացով: Բայցևայնպես՝ ընդհանուր օրինաչափ երևույթը և արդյունքը մնում են նույնը:

Սույն հոդվածի նպատակն է ընթերցողին մատուցել Արևմտյան, Հարավարևմտյան Հայաստանում, Փոքր Հայքում և հարակից շրջաններում, ինչպես նաև պատմական Կիլիկիայում վերապրած հայ էթնոկրոնական տարրի երեք խմբերից հիմնականում «պաշտոնական» հայության գոյատևման մասին վերլուծական և տեղեկութաբանական նյութեր՝ պատմագիտականորեն դրանք տեղավորելով Թուրքիայի Հանրապետության ժամանակաշրջանում:

Շեշտենք, հետևաբար, որ այս անգամ ուղղակիորեն չենք անդրադառնալու «իսլամացած» և «թաքուն» հայության խնդիրներին:

[1] Ալիք, Թեհրան, 1980, դեկտեմբերի 18:

1923-1938 թվականներ

Աթաթուրքյան այս շրջանում հայությունը գտնվել է հետեղեռնյան ծանր հոգեվիճակի մեջ և հիմնականում գոյատևելու ելքեր է որոնել: Լոզանի դաշնագրի մի շարք տրամադրություններ Քեմալ Աթաթուրքին հարկադրում էին մեղմ և զգուշավոր վերաբերմունք ցուցաբերել կրոնական փոքրամասնությունների հանդեպ:

1915 թվականին Օսմանյան կայսրության տարածքներում բնակվող հայության բնաջնջումն ու տեղահանությունը լիակատար ավարտի չէր հասցվել. այդ տարածքներում դեռևս բնակվում էին հայության բեկորներ: «Այգը» 1918թ. դեկտեմբերի 16-ի համարում գրել է. «Ըստ վերջին ստույգ տեղեկությունների՝ Տաճկաստանում ապրում է մեկ միլիոն հայ»[1]: Նկատի առնելով, որ սրանց տեղահանությունը մասամբ շարունակվել է 1918-23թթ. ևս, մեկ միլիոն թվաքանակին պիտի որոշ վերապահությամբ մոտենալ, եթե, հատկապես, հարցը վերաբերում է «պաշտոնական» հայությանը:

Հայկական աղբյուրների համաձայն, Արևմտյան Հայաստանի Էրզրում, Վան, Բաղեշ (Բիթլիս) և Տրապիզոն վիլայեթներում 1914թ. ավելի քան 705 հազար հաշվվող հայ բնակչությունից 1922թ. գոյատևել է մոտավորապես 63 հազարը: Նույն ժամանակահատվածում Տիգրանակերտի (Դիարբեքիր) և Խարբերդի (Էլազիգ) վիլայեթներում 328 հազար բնակչից մնացել է 38 հազարը, պատմական Կիլիկիայում և Հյուսիսային Սիրիայում 309 հազարից՝ 70 հազարը, իսկ Փոքր Հայքում և հարակից շրջաններում՝ Սեբաստիայի (Սվազ) վիլայեթում և այլուր 596 հազարից՝ մոտավորապես 44 հազարը: Այսպես՝ կարելի է ամփոփել նախնական պատկերը *(Աղ. 1).*

Աղյուսակ 1

Տարածաշրջան	1914	1922
Արևմտյան Հայաստան	705,000	63,000 (9%)
Հարավարևմտյան Հայաստան	328,000	38,000 (12%)
Պատմական Կիլիկիա	309,000	70,000 (23%)
Փոքր Հայք և հարակից շրջաններ	596,000	44,000 (7%)
Ընդամենը	**1,938,000**	**215,000 (11%)**

Ստորև բերվող թվերը վերցվել են Հայոց ցեղասպանության թանգարանի համացանցային կայքեջից, ուր Օսմանյան կայսրության հայ բնակչության 1914թ. և 1922թ. վիճակագրության պատկերները ներկայացված են ըստ հետևյալ աղյուսակի[2].

[1] Այգ, Թաւրիզ, 1918, դեկտեմբերի 16:
[2] http://www.armenocide.am/genocide_museum.htm.

Շրջանը	Բնակչությունը 1914թ.	Սպանված կամ տեղահանված	Բնակչությունը 1922թ.
Էրզրում	215,000	213,500	1,500
Վան	197,000	196,000	500
Դիարբեքիր	124,000	121,000	3,000
Խարբերդ	204,000	169,000	35,000
Բիթլիս	220,000	164,000	56,000
Սեբաստիա (Սվազ)	225,000	208,200	16,800
Տրապիզոն	73,390	58,390	5,000
Արևմտյան Թուրքիա	371,800	344,800	27,000
Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա	309,000	239,000	70,000
Եվրոպական Թուրքիա	194,000	31,000	163,000
Ընդամենը	**2,133,190**	**1,745,390**	**387,800**

Թվում է՝ հայկական աղբյուրների համար սկզբնաղբյուր են հանդիսացել Թեոդիկի տեղեկությունները, որոնք լույս են տեսել նրա նշանավոր «Տարեցույցում» 1922թ.[1]:

Իսկ մի թուրքական աղբյուրից[2] քաղված տվյալներից կարելի է կազմել հետևյալ պատկերը *(Աղ. 2).*

Աղյուսակ 2

Տարածաշրջան	1914	1922
Արևմտյան Հայաստան	675,000	17,000 (3%)
Հարավարևմտյան Հայաստան	338,000	45,000 (13%)
Պատմական Կիլիկիա	205,000	182,500 (89%)
Փոքր Հայք և հարակից շրջաններ	375,000	44,300 (12%)
Ընդամենը	**1,593,000**	**288,880 (18%)**

Թուրքիայի «Հուրիեթ» օրաթերթի 1990թ. ապրիլի 24-ի համարում ասված է, որ հակառակ հայկական կողմի պնդման, ըստ որի՝ Անատոլիան պարպվել է հայությունից, «295,579 հայեր զերծ են մնացել տեղահանությունից»[3]:

Հետազոտական մի հաստատություն իր *«The Armenian Christian»* վերնագրով զեկուցագրում ասում է, որ բնաջնջումից ու տեղահանությունից փրկված հայերի թվաքանակը շուրջ 200 հազար է եղել[4]: Այս տվյալը համապատասխանում է Հայկ Աճեմյանի խմբագրած «Բագին օրացույցում» բերված տվյալին, որը, մի շարք պաշտոնական աղբյուրների հիման վրա, 1922թ. «Անատոլիայի»

[1] Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1969, թիվ 2, էջ 107:
[2] http://user.freenet.am/~gurun/turkce.htm.
[3] Դրօշակ, Աթենք, 1990, յունիսի 6, էջ 39:
[4] www.isic-centre.org/Bulletins/95_Oct_Nov.pdf.

հայության թվաքանակը ներկայացնում է 200.000 մարդ[1]: Իսկ Սիմոն Վրացյանը 1925թ. գրում էր. «Չպետք է մոռանալ, որ հայկական նահանգներում (առանց Տրապիզոնի) այժմ մնացել է ոչ ավելի, քան 150.000 մարդ»[2]: Թվում է՝ նա գիտակցաբար է ամբողջական թվից հանել «իսլամացած» հայերին, և սա ևս ապացուցում է, որ «իսլամացած» հայերի մասին որոշակի թվային պատկերներ գոյություն չեն ունեցել այս ժամանակահատվածում:

Մեր տրամադրության տակ գտնվող աղբյուրներում բերված սկզբնական տվյալները հաճախ հակասում են միմյանց: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության թանգարանի համացանցային կայքեջում Վանի հայ բնակչության թվաքանակը 1922թ. նշվում է 500, սակայն հայկական մի այլ աղբյուրից պարզվում է, որ միայն Վանից 1923թ. Խորհրդային Հայաստան է ներգաղթել 953 հայ[3]: Ամեն դեպքում, նման տարբերությունները, եթե նույնիսկ փոքր են, մտածել են տալիս, որ մնացորդաց թվաքանակն ավելի շատ է, քան նշվում է թուրքական կամ նույնիսկ հայկական աղբյուրներում:

«Ակոս» շաբաթաթերթի հանգուցյալ խմբագրապետ Հրանտ Դինքն իր մի հարցազրույցում հայ բնակչության թվաքանակը Թուրքիայի Հանրապետության հիմնադրման ժամանակ գնահատում է 130 հազար՝ Ստամբուլում, ավելի քան 170 հազար՝ գավառներում և շեշտում. «Ես չեմ հաշվում ձուլված բնակչությունը, որի թիվն անհայտ է»[4]:

Լոզանի կոնֆերանսի Ռազմատարածքային հանձնաժողովի տասնչորսերորդ նիստում՝ 1922թ. դեկտեմբերի 13-ին, զեկուցաբեր Իսմէթ փաշային ուղղած հարցում լորդ Քերզոնն ասում էր. «Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիվը նվազելով՝ հասել է 130 հազարի»[5]:

Հայկազ Ղազարյանն իր «Ցեղասպան թուրքը» աշխատության մեջ «Թուրքիայում մնացած վերապրողների» թիվը գնահատում է 150 հազար մարդ[6]: Իսկ ՀՀ և ազգային պատվիրակության «մոտավոր հաշվեկշռում» (որ պատրաստվել էր Փարիզի Խաղաղության վեհաժողովի համար 1919թ.) նշվում է, որ 226 հազար հայեր չեն կոտորվել և չեն էլ տեղահանվել[7], այլ խոսքով՝ գոյատևել են Թուրքիայում:

Թուրքիայում հրատարակվող «Ռադիկալ» թերթի աշխատակից Յահէթ

[1] Բազին օրացոյց, Թաւրիզ, 1923, էջ 117:
[2] Դրօշակ, Փարիզ, 1925, նոյեմբեր, էջ 137:
[3] *Մելիքսեթյան Հ. Ու.,* Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, Երևան, 1975, էջ 171:
[4] Armenians And Turkey: Shared history, http://www.turkishdailynews.com/old_editions/09_18_96/feature.htm.
[5] *Կիրակոսյան Ջ.,* Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 750:
[6] *Ղազարեան Հ.,* Ցեղասպան թուրքը, Բէյրութ, 1968, էջ 420-421:
[7] Ցատկացումներու և հատուցումներու մօտաւոր հաշուեկշիռ Թրքահայաստանի և Կովկասի Հայկական Հանրապետութեան մէջ հայ ազգային վնասներուն համար, 1919, Փարիզ:

Գոչօղլուն հետաքրքիր տեղեկություն է տալիս հայության մնացորդացի մասին: Հաստատելով, որ տարիներ ի վեր Թուրքիայի հետազոտական շրջանակներում բանավեճի նյութ է եղել «տեղահանության» հետևանքով մահացած հայության թվաքանակը, նա եզրակացնում է. «Մի բան ստույգ է. տեղահանությունից հետո հայ բնակչության թիվը մոտավորապես 600 հազար է: Հայտնի չէ, թե մահմեդական ընտանիքների որդեգրած հայ երեխաների թիվը ինչ է, բայց ծանոթ է, որ այս թիվն էլ շատ բարձր է»[1]:

Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն, մոտավորապես հաստատելով այդ թիվը, մի հարցազրույցի ժամանակ ասում է. «Քննարկելով քաղաքից քաղաք կացությունը՝ ստուգեցինք, որ 1918թ. Անատոլիայում 650 հազար հայեր կային»[2]:

Ենթադրելի է, թե 600 հազարանոց այս տվյալի բուն աղբյուրը Կ.Պոլսի պատրիարքն է: Ըստ թուրք դիվանագետ Քյամուրան Կյուրյունի՝ պատրիարքն անգլիացիներին տված իր վիճակագրական տեղեկագրում Սևրի դաշնագրից առաջ Օսմանիայի սահմաններում բռնագաղթի ենթարկված, ապա վերադարձած և վերաբնակված հայերի թվաքանակը գնահատել է 625 հազար[3]:

Իմիջիայլոց, ասենք, որ մեր ուսումնասիրած փաստաթղթերում նկատելի է թուրք արդի պատմագիտության հատուկ շեշտադրումը հանրապետական շրջանում «տեղահանված» հայության, այսպես ասած, «վերադարձի» վրա: Թարմագույն օրինակներից է հետևյալը. «Հազարավոր հայեր,- պնդում է թուրք պատմաբան Սոնեյ Չագապտայը,- որոնք թողել էին Անատոլիան, սկսեցին վերադառնալ»[4]: Մեր կարծիքով՝ այս դրույթը, թեև որոշ չափով համապատասխանում է իրականությանը, այդուհանդերձ, առաջ է քաշվում հետագա տարիներին Քեմալի իշխանությունների միջոցով կազմակերպված «անվերադարձ» բռնագաղթերի անմարդկային իրողությունը քողարկելու նպատակով:

Ալին Օզինյանն իր հետաքրքրական հոդվածաշարում ակնարկում է Պոլսո պատրիարքարանի կողմից 1921թ. պատրաստված և նույն թվականի ապրիլի 26-ին ԱՄՆ արտգործնախարարությանը փոխանցված կարևոր մի փաստաթուղթ, ուր հետեղեռնյան հայ որբերի թիվը գնահատվում է 58.500: Այդ «հաշվետվության» մեջ հայ որբերի ցրվածության պատկերը ներկայացվում է քաղաք առ քաղաք, որը մենք մեր ուսումնասիրության աշխարհագրական հիմունքներով վերադասավորել ենք հետևյալ կերպ[5].

[1] Նոր Մարմարա, 2003, յունուարի 27:
[2] Նոր Մարմարա, 2004, օգոստոսի 29:
[3] Նոր Մարմարա, 2005, փետրուարի 12:
[4] *Suny G., Gocek F. M.,* Discussing Genocide: Contextualizing the Armenian Experience in the Ottoman Empire, The Journal of International Institute, Vol. 9, No. 3, Spring/Summer 2002.
[5] http:www.newneighbors.am/am/news.php?cont=3&rg=2&date=16.02.2006&month=3&year=2006

- Արևմտյան Թուրքիայում. Ստամբուլ՝ 6.000, Իզմիր, Բուրսա և Բալըքեսիր՝ 2.000, Ինեբոլու՝ 1.500։
- Փոքր Հայք և հարակից շրջաններում. Կոնիա՝ 3.000, Գաստամոնու՝ 500, Սվազ՝ 3.500, Կեսարիա՝ 3.500։
- Հարավարևմտյան Հայաստանում. Դիարբեքիր՝ 25.000, Խարբերդ՝ 3.000։
- Արևմտյան Հայաստանում. Տրապիզոն՝ 2.500, Էրզրում՝ 3.000, Բիթլիս և Վան՝ 5.000։

Բերված թվաքանակների պարզ միջինը մեզ հանգեցնում է 330 հազար մոտավոր թվին։ Եթե նկատի առնենք, որ նշված աղբյուրներից գրեթե բոլորն էլ մատնանշում են «իսլամացած»-ների բարձր թվի առկայությունը և որ դա չեն արտացոլում իրենց ներկայացրած թվերում, կարելի է ամենայն չափավորությամբ եզրակացնել, որ մոտ 330 հազար թիվը համարվում է Անատոլիայի վերապրած հայության կլոր թիվը (մեր տիպաբանության առումով և՛ «թաքուն», և՛ «պաշտոնական» հայության սկզբնական հանրագումարը)։

Թ.Խ.Հակոբյանը «Պատմական Հայաստանի քաղաքները» աշխատության մեջ մի քանի քաղաքների և գյուղակների պարագայում ակնարկել է Եղեռնից վերապրած հայության գոյությունը։ Այսպես՝ Ակնում (Էգին կամ Քեմալիե) 1915թ. ավարտին եղել է 400 հայ[1], Ամասիայում 1929թ.՝ 400[2], Արաբկիրում 1922թ.՝ 800[3], Բալովում (Պալու)՝ մի քանի հարյուր հայեր[4]։ Խարբերդում (Էլազիգ) 1915թ. ավարտին փրկվել է 2000 հայ[5], նույն թվականին Խնուսում՝ 200[6]։

Կամախի (Քեմահ) հայության շատ փոքր մասն է ազատվել, որը ժամանակավորապես ապաստան է գտել Դերսիմի և Երզնկայի ալևիների և քրդերի մոտ. 1917-18թթ. Կամախում միայն 100 հայ է եղել[7]։ Որոշ թվով հայեր են վերապրել Հազրոյում[8] և Շապին-Գարահիսարում[9]։ Շատախում վերապրող հայությունն, ըստ երևույթին, ավելին է եղել[10]։ Չմշկածագում (Դերսիմի մոտակայքում) 1930թ. եղել են չնչին թվով հայեր[11]։ Սղերդի (Սիիրտ) հայերից թուրքերը պահել են միայն 100 արհեստավորներ՝ իրենց ծառայեցնելու համար[12]։ Իսկ Քղիի հայության թվաքանակը 1929թ. 500 է եղել[13]։

[1] *Հակոբյան Թ.Խ.,* Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 32։
[2] Նույն տեղում, էջ 36։
[3] Նույն տեղում, էջ 51։
[4] Նույն տեղում, էջ 88։
[5] Նույն տեղում, էջ 135։
[6] Նույն տեղում, էջ 144։
[7] Նույն տեղում, էջ 155։
[8] Նույն տեղում, էջ 174։
[9] Նույն տեղում, էջ 205։
[10] Նույն տեղում, էջ 207։
[11] Նույն տեղում, էջ 213։
[12] Նույն տեղում, էջ 227։
[13] Նույն տեղում, էջ 250։

Համաձայն Թ.Խ. Հակոբյանի բացատրության՝ Կարինում Եղեռնից հետո այլևս *հայախոս* հայ չէր մնացել[1]: Այս հանգամանքը ինքնին կարևոր ենք նկատում մեր աշխատության մեջ հիմնավորված տիպաբանության առումով, որն առկա է գրեթե բոլոր հայահոծ քաղաքներում և ավաններում: Կեսարիայի պարագայում էլ (ներառյալ Թալասը և մյուս շրջանները), ըստ Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանի, Եղեռնից հետո մնացել են «միայն 260 տուն իսլամացած հայ ընտանիքներ»[2], մոտավորապես 1200-ից 1500 մարդ, որոնք աստիճանաբար ձևավորվում են որպես «թաքուն» հայություն:

Հայությունն այս ժամանակաշրջանում մայր հատվածից կտրված, առանձնացված և բարոյահոգեբանական իմաստով քայքայված մի զանգված է եղել, մի կոնգլոմերատ՝ ցրված ամբողջ հանրապետության տարածքով :

Մի շարք վկայություններ խոսում են այդ զանգվածի առօրյա կյանքի մասին Փոքր Հայքում և հարակից շրջաններում. «Գավառներից ստացած հատուկտոր լուրերը մխիթարական ոչինչ չեն պարունակում, եթե չհաշվենք Կեսարիայի որբանոցի խնդիրը: Եղած դիմումները նպաստ հավաքելու մասին բավական լավ արձագանք գտան հայերի մեջ, և թերթերը օրը օրին ցուցակագրում են զանազան ազգայինների՝ հօգուտ Կեսարիայի որբերի նվիրած լումաները»[3]:

Որտեղ գոյություն չեն ունեցել պետական կոշտ արգելքներ, այնտեղ նկատելի են նախկին իներցիայով ընթացող հավաքական մտածողության, հավաքական աշխատանքի և հավաքական հոգածության երևույթներ: Նման երևույթներ հատկապես նկատելի են Փոքր Հայքի և հարակից շրջանների քաղաքներում, որոնք ուղղակիորեն գտնվել են եվրոպական դիվանագիտության տեսադաշտում:

Կեսարիայում հայերի համայնքային կյանքը նույնիսկ որոշակիորեն կազմակերպված է եղել, և քաղաքը փաստորեն հանդիսացել է գավառահայության հոգևոր կենտրոնը: Այս մասին տեղեկություններ է տալիս նաև Կեսարիայի առաջնորդական փոխանորդ Տ. Սերովբե քահանան, որ 1931թ. սեպտեմբերին այցելության է գնացել ներքին գավառները (Յոզղաթ, Կոնիա, Էրեյլի, Դիարբեքիր և Կարս). «Համաձայն Սերովբէ քահանայի տեղեկութիւններին Եօզգաթում, օրինակ, հայոց թիւը այժմ 600 է»[4]: Սերովբե քահանա Բուրմայանի Յոզղաթ այցելության մասին հանդիպում ենք նաև Լոնդոնի՝ անգլերեն հրատարակվող «Մասիսում»[5], ուր պարզվում է, որ քահանան այցելել է շուրջ երեսուն գյուղաքաղաք, գյուղ և գյուղակ՝ Յոզղաթի մոտ 60 կիլոմետրանոց շրջա-

[1] Նույն տեղում, էջ 165:
[2] Պալաքյան Գ., Հայ Գողգոթան, Վիեննա, 1922, էջ 278:
[3] Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1928, մարտ, էջ 172:
[4] Հայրենիք ամսագիր, 1931, սեպտ., էջ 168:
[5] Masis, London, 1931, August-October, p. 234.

կայքում: Նա ամենուր փորձել է բավարարել գյուղացիության կրոնական և հոգևոր պահանջները՝ «հարյուրաւոր երեխաների մկրտելով որպէս քրիստոնեայ և հարիւրաւոր ամուսնական արարողութիւններ կատարելով»[1] և այլն…

Անդրանիկ Դակեսյանն իր *«The Armenians in Post-WW I Turkey»* ուշագրավ աշխատության մեջ, հիմնվելով հայկական մամուլի օրվա տեղեկատվության վրա, մանրամասնությամբ ճշտում է հայության թվաքանակը Փոքր Հայքի և հարակից շրջանների մի քանի քաղաքներում. «1920-ականների զեկույցները հաստատում են,- գրում է Դակեսյանը,- որ Սեբաստիայում եղել են երկու հազար հայեր, մոտ 800-ը տեղացի, 750-ը՝ Կարայից և 450-ը՝ շրջակա գյուղերից եկած»[2]: Նա նույնպես վկայում է, որ Ամասիայում 1925թ. եղել է հազար, իսկ 1927թ.՝ 1830 հայ, որից 1200-ը բնակված է եղել Ամասիայում և 630-ը՝ գյուղերում[3]: Քննելով Թոքատի պարագան՝ Դակեսյանը նշում է, որ այդտեղ 1928թ. 1600 հայ է եղել, ընդ որում՝ 330-ը գյուղերում[4]:

Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի 1927թ. «Ընդարձակ տարեցոյցում» լայն տեղ է հատկացվել «ներքին գաւառներու մէջ» ապրող հայությանը: Կարևոր մանրամասնություններ պարունակող սույն տեղեկատվությունից պարզվում է, որ այդ ժամանակ Կեսարիա կուսակալության տարածքում բնակվել է 4313, Գաստամունիում՝ 3600, Կոնիայում՝ 289 հայ: Սեբաստիայում եղել է 438, Յոզղաթում՝ 375 և Թոքատում՝ 150 հայ ընտանիք[5]: Տեղեկագրից պարզվում է նաև, որ Կեսարիայի Ս. Կարապետ վանքի որբանոցը հիմանադրվել է Էվերեկ-Ֆենեսե նահիեում (վարչատարածքային միավոր) 1918թ.: Որբանոցը, որ ամբողջապես ֆինանսավորվել է ազգային (ոչ պետական) աղբյուրներից, 1927թ. դրությամբ ունեցել է շուրջ 100 որբ, ընդ որում՝ 40-ից 50-ը պատսպարյալի կարգավիճակով[6]:

Հարավարևմտյան Հայաստանում գտնվող հայության մասին դարձյալ կարդում ենք «Հայրենիք» ամսագրի էջերում, ուր ակնարկվում է, որ Մեզրեռում, Խարբերդում ու շրջակա գյուղերում ապրում է մոտ 1000 շունչ հայ, որոնց մեծ մասը սոցիալապես բարեկեցիկ վիճակ ունի: Ազգային կյանքն այնտեղ, սակայն, այնքան էլ լավ դրության մեջ չէ: Մի քանի տարի է, ինչ փակվել է ազգային վարժարանը, և դրա հետևանքով 2-300 հայ աշակերտներ զրկվել են ուսումից: Նրանց փոքր մասը միայն՝ 40-50 հոգի, ստիպված հաճախել է թուրքական դպրոցներ: Մեզրեռում պահպանվել են եկեղեցին և դրա թաղային խորհուրդը: «Հայության հոգածության առարկա է մի ծերանոց, որտեղ

[1] Նույն տեղում, p. 235:
[2] Հայկազյան հայագիտական հանդէս, Բէյրութ, 1995, էջ 418:
[3] Նույն տեղում, էջ 422:
[4] Նույն տեղում, էջ 424:
[5] Ընդարձակ տարեցոյց, կազմեցին՝ Չուհաճեան Մ. և Ազատեան Թ., Կ.Պոլիս, 1927, էջ 337-346:
[6] Նույն տեղում, էջ 340-341:

պատսպարված են 25-30 ծերունիներ»։

«Դրօշակը» ևս հաստատում է այս թիվը՝ ասելով. «Ճիշտ է, ջարդ չկայ առայժմ, քանի որ համրանքով ժողովուրդ մնացեր է իրենց թաթին տակ։ Մաքրուեցան հայերը. հազիւ երկու տասնեակ հազար հոգի կը շնչեն Անատոլուի խորերը, իբրեւ հասարակ ռայաներ»[1]։

Տեղական այս կիսակազմակերպված կյանքը, սակայն, չի կարելի համատարած համարել։ «Հայրենիք» ամսագրի վերոհիշյալ լրագրության շարունակության մեջ կարդում ենք. «Գավառների վիճակը գնալով վատթարանում է։ Այնտեղ եղած հայության թիվը «Ազդարար»-ի թղթակիցներից մեկը հաշվում է 22-ից 25 հազար։ Թղթակցի ասությամբ՝ 3500-ից ավելի երկսեռ մանուկներ փողոց են նետված»[2]։

Ա.Համբարյանը «Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը» հոդվածում հստակ պատկեր է տալիս խնդրո առարկա Հարավարևմտյան Հայաստանի որոշ քաղաքներում 1927թ. ապրող հայության թվի մասին։ Այսպես, օրինակ, նա Դիարբեքիրի հայության համար նշում է 955, Խարբերդի համար՝ 2399, Սղերդի համար՝ 265 թվերը[3]։

Հենվելով Ա.Դակեսյանի մեջբերումների վրա՝ հաստատվում է, որ Խարբերդում և շրջակա գյուղերում 1930-ականներին 200 հայ ընտանիք է եղել, մեծ մասամբ՝ արհեստավորներ։ Այդ թիվը 1938թ. հասել է 1500-ի, որը ներառում է ինչպես առաքելական, այնպես էլ կաթողիկե հայերի թվաքանակը[4]։ Այստեղ ևս հավելյալ բացատրություններ չկան կրոնափոխ հայերի մասին։

Ա.Դակեսյանը նաև արժեքավոր տեղեկություններ է փոխանցում Արևմտյան Հայաստանի հայության մասին։ «Աղբյուրները հաստատում են,- գրում է նա,- որ 1931թ. շուրջ հազար հայեր են ապրել Էրզրումում, Երզնկայում և Բիթլիսում»[5]։ Բերվում են մանրամասներ Բիթլիսի մասին, որի գյուղերից Ուսնակում ապրել են երեք, Ճերմուկում՝ հինգ, Օլմեզում՝ վեց, Զեյնաբում՝ երեք, Ծաղկաձորում՝ մեկ և Աղվենիկում՝ երկու հայ ընտանիքներ՝ բոլորն էլ ընչազուրկ պայմաններում[6]։ Դակեսյանի ուսումնասիրությունները նույնպես ցույց են տալիս, որ Մուշում 1930թ. եղել է 85 հայ, ութը՝ Տևրիկում, հինգը՝ Փակարիչում, չորսը՝ Վիժանում, 11-ը՝ Կոթերում, 29-ը՝ Խարխինում, 23-ը՝ Մամուկխաթունում և այլն[7]։

Ա.Համբարյանի հոդվածից կարելի է ներկայացնել լրացուցիչ պատկեր Արևմտյան Հայաստանի վերաբերյալ. 1927թ. տվյալների հիմամբ Բիթլիսի

[1] Դրօշակ, Ժնեւ, 1925, յուլիս, էջ 17։
[2] Հայրենիք ամսագիր, 1928, մարտ, էջ 172։
[3] Բանբեր Երևանի համալսարանի, 1969, թիվ 2, էջ 112։
[4] Հայկազեան հայագիտական հանդէս, 1995, էջ 413-414։
[5] Նույն տեղում, էջ 405։
[6] Նույն տեղում։
[7] Նույն տեղում, էջ 406։

հայության թվաքանակը գնահատվում է 285, Կարսի հայությանը՝ 21 և Տրապիզոնի հայությանը՝ 98 մարդ[1]: Նա շեշտում է, որ սրանք այն հայերն են, «որոնք դեռ շարունակում են խոսել մայրենի լեզվով»[2]:

1920-ականների ավարտին պայթեց Արարատյան ապստամբությունը՝ սասանելով քեմալական Թուրքիայի հիմքերը: Շեյխ Սայիդ փաշայի 1925թ. գլխավորած ընդվզման ներքցիայով ընթացող այդ նոր ապստամբության երեք գլխավոր ղեկավարներն էին Իբրահիմ Հըսգէ Թելի փաշան, Իհսան Նուրի փաշան և Զիլան բեյը (վերջինս Խնուսի Հարամիկ գյուղի բնակիչ, նույն ինքը՝ Արտաշես Մուրադյանն էր)[3]:

Արարատյան ապստամբության կազմակերպման գործում հայ-քրդական համագործակցությունը Թուրքիայի իշխանությունների աչքից չէր վրիպում: Ինչպես Սայիդ փաշայի ապստամբության, այնպես էլ հոյբունական այս շարժման մղիչ ուժն ու շունչ տվող ոգին, թուրք իշխանությունների համոզմամբ, հայությունն էր՝ իր վերապրող զանգվածներով:

Հետևաբար՝ այս անգամ էլ նրանք հարցի լուծումը գտնում էին հայության տեղահանման մեջ, որի պայմանները, ի տարբերություն անցյալի, պիտի գոյանային առավելաբար տնտեսա-հասարակական ճնշումներով և կենցաղային անտանելի պայմանների ստեղծմամբ: Այս ուղղությամբ կառավարությունը և տեղական իշխանությունները ծրագրված կերպով լայն քարոզարշավ են սկսում. «Տիգրանակերտի թուրք օջախը,- գրում է «Հայրենիք» ամսագիրը,- ժողով է գումարել և հայերի նկատմամբ ընդունել հետևեալ որոշումները. 1. Հայերի հետ առևտուր չանել, 2. Հայ գործավորներ և արհեստավորներ բացարձակապես չգործածել», …բռնի կերպով փողեր գանձել, պարտքերը չեղյալ հայտարարել, գույքեր առգրավել և այլն[4]:

Իսկ Արևմտյան Հայաստանում Սղերդի և Ռադուանի հայերն ու եզդիները հաշտ ու խաղաղ էին ապրում միմյանց հետ և կենտրոնական իշխանություններին չէին ենթարկվում: Բաղեշի (Բիթլիս) կառավարիչը 1926թ. 30 հազարանոց բանակով հարձակվում է հայերի և եզդիների վրա: Վտանգը կանխելու համար ստեղծվում է հայ-եզդիական 10 հազարանոց միացյալ բանակ, որին հաջողվում է թշնամուն հետ մղել[5]:

Պատմական մի այլ վկայության համաձայն՝ 1929-1930թթ. միայն Խարբերդից (Էլազիգ), Տիգրանակերտից (Դիարբեքիր) և Մարդինից տեղահանվել է ավելի քան 30 հազար հայ: Դոկտ. Հոֆմանի *«Armenians In Turkey Today»* (Հայերը Թուրքիայում այսօր) արժեքավոր աշխատության մեջ հանդի-

[1] Բանբեր Երևանի համալսարանի, 1969, թիվ 2, էջ 112:
[2] Նույն տեղում:
[3] Դրօշակ, Երեւան, 1999, յունիսի 28, էջ 36:
[4] Հայրենիք ամսագիր, 1931, մայիս, էջ 170:
[5] *Պողոսյան Ս.Կ.,* Քրդերը և Հայկական հարցը, Երևան, 1991, էջ 278:

պում ենք անգլիացի պատմաբան Քրիսթոֆըր Վաքըրի հետևյալ մեջբերմանը. «Պոնտացի հույները (Տրապիզոն գավառում) դաժանորեն հալածվում էին 1922-24թթ.: Համայնքը բնաջնջվեց, և այդ շրջանում հայերը նորանոր հարձակումների ենթարկվեցին: 1929թ. ամռանը և հաջորդ ամիսներին սկսվեց հայ գյուղացիների և արհեստավորների մնացորդների տխուր տեղահանությունը»:

Պրոֆ. Շավարշ Թորիկյանը, «Հայկական հարցը և միջազգային օրենքը» աշխատության մեջ հաստատելով 1929թ. աշնան 30 հազարանոց բռնագաղթը, ուշագրավ մանրամասնություն է տալիս այդ կապակցությամբ, ըստ որի՝ բռնագաղթի ենթարկված հայերի թուրքական անցագրերում դրվել է «Թուրքիա վերադարձը արտոնված չէ» գրությամբ կնիք[1]:

Իսկ Երվանդ Խաթանեսյանը նշում է, որ սույն գաղթի ենթակաների գրեթե կեսը «քրդախոս հայեր էին»[2]: Կարելի է եզրակացնել, որ բռնագաղթը համընդհանուր բնույթ է կրել և իրականացվել է ինչպես «պաշտոնական», այնպես էլ արդեն ձևավորվող «թաքուն» հայության նկատմամբ: Ավելացնենք նաև, որ որոշ փաստեր հիմք են տալիս եզրակացնելու, որ «Թուրքիայից անվերադարձ» հեռանալու պարտադրանքը չի սահմանափակվել միայն 1929թ. գաղթի պարագայով: «Դրօշակի» լրագրություններից պարզվում է, որ Սեբաստիայի առաջնորդ Սարգիս վարդապետը եպիսկոպոսական տիտղոս ստանալու նպատակով 1924թ. էջմիածին գնալուց հետո զրկվել է Թուրքիա վերադառնալու իրավունքից[3]:

Կոտորածից հազիվ փրկված հայության անդորրը հերթական անգամ խանգարելու մասին է վկայում նաև Դերսիմի գյուղերից (Խարբերդի վիլայեթ, մեծամասնությամբ քրդաբնակ) Խոզաթ գյուղում (ներկայիս Հոզաթ կոչվող գյուղաքաղաքը) 1909թ. ծնված Ալեքսան Սևակյանը. «Մուստաֆա Քեմալը հրաման հանեց, որ հայերը չպիտի ապրեն գյուղերում, այլ միայն քաղաքներում: Հայասեր մեր գյուղապետի կարգադրությամբ մենք մնացինք գյուղում, բայց ամիսը մի անգամ քաղաք էինք գնում և ներկայանում՝ փաստելու համար, որ բնակվում ենք քաղաքում: Այսպես շարունակվեց մինչև 1929թ., և մի օր էլ գյուղի աղան մեզ ասաց. «Այստեղից պիտի հեռանաք… »[4]:

Նույն ճակատագրին են ենթարկվել Դերսիմի (Թունչելի) Չմշկածագ քաղաքի հայկական գյուղերը: Քաղաքի ոստիկանապետը 1930թ. սկզբներին կանչել է Չմշկածագի անվանի հայերից մեկին և փոխանցել հետևյալը. «Սարգի՛ս աղա, Մուսթաֆա Քեմալ Փաշայէն մեզ հրաման է եկեր, որ Եփրատ (Գարա Սու) և Արածանի գետերուն եզերքի և միւս գիւղերուն մէջ ոչ մէկ հայ պէտք է մնայ. բոլորը պէտք է հաւաքուին Չմշկածագ»[5]:

[1] Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976, էջ 184:
[2] *Խաթանէսեան Ե.,* Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 27:
[3] Դրօշակ, Ժնեւ, 1925, յուլիս, էջ 18:
[4] Արմենիա, Սիդնէյ, 2003, ապրիլի 23, թիւ 394:
[5] *Գասպարեան Հ.Յ.,* Չմշկածագ և իր գիւղերը, «Պայքար» տպարան, 1969, էջ 457:

Իմիջիայլոց, արձանագրենք ևս մեկ հաստատում ցեղասպանությունից փրկված հայերի նկատմամբ դերսիմցի ալևիների ցուցաբերած բարյացակամության մասին[1], որն, իհարկե, չէր կարող էական խանգարում առաջացնել պետական ծրագրերում: Դերսիմի փրկված հայերի թվաքանակը, ըստ որոշ աղբյուրների, վեց հազար է եղել, իսկ ըստ այլ աղբյուրների՝ տասը հազար[2]:

1929-30թթ. տեղահանությունները եղել են պետականորեն ծրագրված ու կազմակերպված լայնամասշտաբ միջոցառումներ, և գաղթի պայմանները ստեղծվել են ամենուրեք. «Սուլթան Համիդի շրջանի պես, հիմա էլ հայերին անվարան «գյավուր» են կոչում»[3]: Ըստ «Հայրենիք» ամսագրի սույն տեղեկության՝ «գյավուր» հայերը բացարձակապես զուրկ են եղել իրենց գյուղերից կամ քաղաքներից դուրս գալու իրավունքից, և, փաստորեն, ոչ ոք ճամփորդելու արտոնություն չի ստացել՝ բացի «Թուրքիայից անվերադարձ դուրս գալու համար» պարտադրանքն ընդունածներից:

Ըստ թուրքական 1928թ. «Դևլեթ սալնամեի» («Կառավարական տարեգիրք»)՝ ասիական Թուրքիայում ապրում էին 29 հազար *հայախոսներ*[4]: Տարեգրքի տվյալները, որոնք, փաստորեն, 1927թ. թուրքական մարդահամարի պետական վերարտադրումն են, ցույց են տալիս, որ այդ թվականներին Բայազիդում եղել է ընդամենը մեկ, իսկ Էրզրումում՝ 12 *գրիգորյան հայ*[5]: Հայախոս կամ գրիգորյան լինելու շեշտադրումն առկա է հանրապետական Թուրքիայի պարբերական բոլոր մարդահամարներում:

Հակահայ հալածանքների պայմաններում, այնուամենայնիվ, Կ.Պոլսի պատրիարքության կողմից որոշ փորձեր արվել են վիճակը մեղմելու և սրտերը մխիթարելու ուղղությամբ. «Պոլսո Կրոնական ժողովը որոշել է մի եպիսկոպոս ուղարկել Կեսարիա,- գրում էր «Հայրենիք» ամսագիրը,- հիշյալ շրջանների համար քահանաներ ձեռնադրելու համար…»[6]:

Գտնվելով Ֆրանսիայի ռազմաքաղաքական ազդեցության գոտում՝ պատմական Կիլիկիայի հայությունն ունեցել է քաղաքական և հասարակական առանձնահատուկ ճակատագիր: Ֆրանսիական իշխանություններն իրենց աշխարհաքաղաքական և ռազմական նպատակների իրագործման համար զինում էին հայերին և համագործակցում նրանց հետ: Թուրքական «Ենի Ադանա» թերթն իր 1925թ. հոկտեմբերի 31-ի համարում, ակնարկելով Կիլիկիայի քաղաքական անցուդարձը, գրում է. «Վերջերս Բեյրութի հայ կոմիտեն ժողովներ գումարելով՝ որոշել է հայերից միլիցիա ուժեր կազմել և օգնել

[1] http://members.tripod.com/~TurkKurd/kurdistan.html.
[2] *Գասպարեան Հ.Յ.,* Չմշկածագ և իր գիւղերը, «Պայքար» տպարան, 1969, էջ 448:
[3] Հայրենիք ամսագիր, 1931, մայիս, էջ 170:
[4] *Խաթանէսեան Ե.,* Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 27:
[5] http://www.did-dpa.org/Html/engarmenianQ6.htm.
[6] Հայրենիք ամսագիր, 1931, նոյեմ., էջ 169:

ֆրանսիացիներին։ Հայ կոմիտեների ժողովներին մասնակցում էին նաև Ադանայի կողմերի հայ կոմիտեների պետերը» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[1]։

Իհարկե, պետք է ասել՝ միշտ չէ, որ համընկնում էին հայկական և ֆրանսիական շահերը։ Ֆրանսիական իշխանությունների դժգոհությունները երբեմն հանգեցնում էին «զենքերը հետ վերցնելու» սպառնալիքների և զգուշացումների։ Թուրքական նույն աղբյուրը գոհունակությամբ էր արձանագրում, որ «հայերը ֆրանսիացիներին էլ դեմ են գնում»[2]։

Համենայնդեպս, պատմական Կիլիկիայի մնացորդացը Հաթայի կիսանկախ մարզում թուրք իշխանությունների անմիջական ճնշումներից զերծ մնաց մինչև 1939թ. ամառ, երբ թուրք-ֆրանսիական համաձայնության լույսի տակ հետևողական քայլեր կատարվեցին պատմական Կիլիկիան վերջնականապես հայաթափելու ուղղությամբ, այս անգամ դարձյալ ոչ թե վայրագ սպանդների, այլ գերազանցապես բռնագաղթի ճանապարհով։

«Զուտ հայաբնակ գիւղը՝ Վագրֆ» հոդվածի հեղինակ Թադեոս Պապիկյանն այսպես է բնութագրում Կիլիկիայի հայաթափումը. 1924 թվականին այս վեց հայաբնակ գյուղերը բաժանվեցին Սուետիա գավառակից։ Մի գավառակ կազմվեց ֆրանսիական իշխանությունների ծրագրի համեմատ, որը համեմատաբար ավելի անկախ էր թեև, սակայն, երբեմն գործածվեց ֆրանսիական շահերի և հաշիվների համար։ «Հասավ 5 հուլիսի 1938թ.,- գրվում է նշված աղբյուրում,- թուրք բանակը, համաձայնությամբ ֆրանսիական իշխանությունների, զորավար Շյուքրու Գանաթլրի հրամանատարությամբ հասավ Անթաքիա, կազմվեցին Հաթայի Հանրապետությունն ու խորհրդարանը... 23 հուլիսի 1939թ. 32.500 հայերու գաղթից հետո, մնացողների մեծամասնությունը Վագրֆ գյուղից էր...»[3]։

Արևմտյան Հայաստանում հայ-եզդիական դիմադրությունը ճնշելու նպատակով 40 հազարանոց թուրքական բանակը 1934թ. գրոհում է Սղերդ և ահավոր խոշտանգումների ենթարկում տարածաշրջանի հայերին և եզդիներին[4]։

Այս հակահայ գործողություններին առընթեր՝ պատերազմական թեժ գծերից հեռու, երևան էին գալիս Քեմալի երկդիմի քաղաքականության հերթական դրսևորումները՝ բիրտ հալածանքներին հաջորդող «մեծահոգի» մեղմությունները։ Ահա այսպիսի «մեծահոգության» մի երկու ակտի մասին կարդում ենք «Հայրենիք» ամսագրի 1937թ. էջերում. պարզվում է, որ Դիարբեքիրի Ս.Կիրակոս և Ս.Սարգիս եկեղեցիների սեփականության փաստաթղթերը

[1] Դրօշակ, Փարիզ, 1925, նոյեմբեր, էջ 151։
[2] Նույն տեղում։
[3] *Պապիկեան Թ.,* Զուտ հայաբնակ գիւղը՝ Վագրֆ, Քուլիս, Ստամբուլ, 1990, փետր., թիւ 1022, էջ 22-24 և 1990, մարտ, թիւ 1023, էջ 38-41։
[4] *Պողոսյան Ս.Կ.,* Քրդերը և Հայկական հարցը, Երևան, 1991, էջ 278։

(կոչվում են թափու սենեդի) ձևակերպվել են ի նպաստ հայության, և դրանք պաշտոնապես գրանցվել են որպես տեղի հայ համայնքի ունեցվածք[1]:

Փոքր Հայքի և հարակից շրջանների հայության սոցիալական կյանքի աննպաստ և անմխիթար պայմանների մասին նույնպես կարդում ենք «Հայրենիք» ամսագրում: Պարզվում է, որ Կեսարիայի առաջնորդական տեղապահը, նկատի առնելով այնտեղի որբերի թշվառ վիճակը, դիմել էր մի քանի սաների Սկյուտարի որբանոց ուղարկելու համար: Սակայն որբանոցի խնամատարությունն ի վիճակի չի եղել բավարարելու դիմումը: Իսկ Սեբաստիայից մի քանի ընտանիք դիմել էր պատրիարքարան՝ Պոլիս տեղափոխվելու ցանկությամբ, և պատրիարքարանը պատասխանել էր նրանց «չժարշվել տեղերից»՝ պատճառաբանելով, որ դրանից առաջ Յոզղաթից Պոլիս եկածներն ամիսներ շարունակ գտնվել են գործազրկության և թշվառության պայմաններում[2]:

1938-50 թվականներ

Աթաթուրքյան շրջանի համեմատությամբ այս փուլում հայությունը գտնվել է քաղաքական և հասարակական առավել անտանելի ճնշման մթնոլորտում: Փաստորեն, Աթաթուրքի և Ինոնյուի ժամանակահատվածների հիմնական տարբերությունն այն է, որ Քեմալի օրոք գոնե պոլսահայությունը համեմատաբար խաղաղ կյանքով էր ապրում: Իսկ գավառահայության դեմ հալածանքի քաղաքականության հարցում էական տարբերություններ չեն ուրվագծվել:

Իսմեթ Ինոնյուն 1943թ.՝ Երկրորդ աշխարհամարտի թոհուբոհին, Թալեաթի աճյունը Գերմանիայից Թուրքիա բերել տվեց և ամփոփեց Ազատություն անվամբ բլրի վրա՝ թերևս որպես իր կատաղի հակահայ քաղաքականության խորհրդանիշ (ի դեպ՝ Իսմեթ Ինոնյուն Թալեաթի քրոջ ամուսինն էր):

Նացիստական գաղափարներով ու հաղթանակներով ոգևորված, թուրքական ցեղապաշտությունը՝ պանթուրքիզմը, այս ժամանակահատվածում վճռականորեն շարունակեց իթթիհաթական քաղաքականությունը հայության ոչնչացման ուղղությամբ: «Նորից հանրամատչելի դարձան Զիա Գեոք Ալփի գրվածքները,- վկայում է Հրաչիկ Սիմոնյանը,- որոնք բազմաթիվ նոր հրատարակություններ ունեցան»[3]:

Թուրքահայ մամուլից ի հայտ են գալիս սահմանափակ տեղեկություններ գավառների հայության հասարակական կյանքի վերաբերյալ: Մեծ ոգևորությամբ է նշվում, օրինակ, Դիարբեքիրում Ս.Զատկի արարողությունը, ուր ներկա է եղել հավատացյալների խուռն բազմություն[4]: Նույն առիթով լուրեր են հաղորդվել նաև Կեսարիայի զատկական հանդիսությունների և այն մասին,

[1] Հայրենիք ամսագիր, 1937, օգոստոս, էջ 174:
[2] Հայրենիք ամսագիր, 1937, դեկտեմբեր, էջ 156:
[3] *Սիմոնյան Հ.Լ.,* Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 478:
[4] Ալիք, 1946, մայիսի 28:

որ Ավագ շաբաթվա ողջ ընթացքում դարձյալ խուռն բազմությամբ է լցված եղել Կեսարիայի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին[1]:

Գավառներում ստվար թվով «պաշտոնական» հայության գոյության մասին է ակնարկում, թերևս, թուրքական «Սոն թելեգրաֆի» լրագրող Նիզամեդդին Նազիֆի հոդվածի այն բաժինը, ուր ասվում է. «*Բովանդակ Թուրքիայում* լրագրավաճառները գոռում են՝ «Մարմարա», «Նոր լուր», «Ժամանակ»…» (ընդգծումը մերն է - Կ.Խ.)[2]:

Այս ժամանակահատվածում թուրքացման քաղաքականության մասին վկայությունների ենք հանդիպում «Ալիքի» էջերում. հենվելով «Էգիպշըն գազեթ» եգիպտական թերթի հաղորդումների վրա՝ թերթը գրում է. «Փոքրամասնություններին պատկանող փաստաբանները դժվարություն են կրում դատեր վարելու: Որևէ պարագայում դատավոր լինել չեն կարող: Երբ հանրապետությունը նոր էր հաստատվել, թուրքերը շատ գործածեցին «Զուլվեք» նշանաբանը: Փոքրամասնություններին պատկանող շատ ընտանիքներ թուրքական անուններ որդեգրեցին: Նրանք իրենց զավակներին թուրքական տիպար անուններ տվեցին և մեծամասնության մշակույթով ու լեզվով կրթեցին նրանց»[3]:

Թուրքահայ գրող Մկրտիչ Մարկոսյանն իր գյուղագրական երկերում՝ «Տիգրիսի ափերեն» (1999) և «Մեր այդ կողմերը» (1988, 1994, 1995 և 2001), պատկերավոր կերպով նկարագրում է Տիգրանակերտի հայության հասարակական կյանքը 1940-ականներին. եկեղեցական արարողություններ, հարսանյաց հանդեսներ և այլն: Նա շեշտում է, որ այնտեղ աստիճանաբար դժվարացել են նույնիսկ պարզ գոյապրուստի պայմանները. «Հայերը միայն արհեստավոր էին,- վկայում է նա,- որովհետև անելու այլ գործ չէր մնացել: Նախ իրենց հողամասերը կորցրել էին, ապա պաշտոնյա կամ զինվորական դառնալ էլ չէին կարող...»[4]:

Թուրքացման քաղաքականության հակահայ կոպիտ երեսն ու ուղղվածությունը չի վրիպել իրանական մամուլի տեսադաշտից: «Իրանէ մա» թերթը, մանրամասն վերլուծելով Ինոնյուի սույն ցեղապաշտական քաղաքականության արմատներն ու թողած հետևանքները, շեշտում էր. «Թուրքիայում գտնվող բոլոր փոքրամասնությունների մեջ ամենից ծանր վիճակում են ապրում հայերը»[5]:

Թուրքացման քաղաքականությանը զուգահեռ, հարստահարման և սոցիալական ծանր ու աննպաստ պայմանների մասին է վկայում մի պոլսահայ մտավորական. «Ընդհանուր թշուառութեան մէջ,- գրում է նա,- կարելի չէ քանի

[1] Ալիք, 1946, յունիսի 5:
[2] Ալիք, 1945, օգոստոսի 22:
[3] Ալիք, 1946, յունիսի 17:
[4] Նոր Մարմարա, 2001, նոյեմբերի 21:
[5] Ալիք, 1946, յուլիսի 11:

մը խօսք չգրել Կեսարիոյ մէջ ապրող 500 մանուկների մասին, որոնք բոլորովին զրկուած են տոհմիկ դաստիարակութիւնից։ Ասիկա մէկ պատկերն է Կեսարիոյ հայութեան։ Վստահ եղէք, թէ ուրիշ շրջաններու մեջ կացութիւնն աւելի վատ է»[1]։

Սույն ժամանակահատվածի սոցիալական կացության մասին հետաքրքրական պատկերներ կան Փոքր Հայքի և հարակից շրջանների «պաշտոնական» հայության կապակցությամբ. օրինակ՝ Կեսարիայի Էվերեկ-Ֆենեսեի հայության սոցիալական կյանքը այս ժամանակահատվածի սկզբնական տարիներին գտնվել է բնականոն վիճակում։ Գյուղաքաղաքի ավելի քան հարյուր ընտանիք հիմնականում զբաղված է եղել արհեստներով (կոշկակար, հյուսն, երկաթագործ) և ապահովել որոշ կայուն վիճակ. «15 տուն չքավորների,- գրում է «Հայրենիք» ամսագիրը 1938թ.,- դրամական օգնություն են հասցնում բարեսեր հայրենակիցները»[2]։

Հետագա տարիներին ակներև է դառնում, որ ինչպես ազգային կյանքը, այնպես էլ սոցիալական վիճակը կտրուկ անկում են ապրել «պաշտոնական» հայության մեջ։ Մամուլից պարզվում է, որ Կեսարիա քաղաքում հարյուրավոր հայ բանվորներ աշխատել են ապուխտի գործարաններում, և ժողովրդի մեծ մասը, զուրկ լինելով անձնական սեփականությունից, վարձկալի կարգավիճակ է ունեցել[3]։ Որոշ տվյալներով՝ Կեսարիայի ապխտագործ հայ բանվորները եղել են շուրջ 500 հոգի, որոնք աշխատել են քաղաքից երկու ժամ հեռավորության վրա գտնվող «Դարբուզաթան» ագարակում[4]։ Տեր Հայկազուն Կարապետյանի վկայությամբ՝ Կեսարիայի ժողովուրդն աղքատ է, և 450 հայ ընտանիքից միայն տասը սեփական բնակարան ունի[5]։

Ազգային և սոցիալական դառն իրողությանն ի տես՝ Կեսարիայի ազգային գիտակից տարրի մոտ ի հայտ է գալիս ազգապահպանման առողջ ձգտումը քաղաքի հայկական վարժարանի վերաբացման հարցում[6], որն, իհարկե, չիրականացավ երբեք։ Իսկ Կեսարիայի եկեղեցու վերաբացման կապակցությամբ «բարենպաստ լուծում» էր սպասվում. «Տեղի հայ բնակչությունը,- գրում էր «Հայրենիք» ամսագիրը 1940թ.,- դիմել է վարչապետությանը և խնդրել, որպեսզի իրենց եկեղեցին չգրավվի ու մթերանոցի չվերածվի։ Վարչապետությունը հրահանգել է ներքին գործավարության միջոցով, որ առաջին առիթով եկեղեցու շենքը պարպվի և հանձնվի հայերին»[7]։ Երևույթը կարելի է օրինաչափ համարել նաև մյուս շրջանների և հետագա ժամանակա-

[1] Ալիք, 1946, յուլիսի 28։
[2] Հայրենիք ամսագիր, 1938, օգոստոս, էջ 170։
[3] Ալիք, 1946, նոյեմբերի 21։
[4] Ալիք, 1945, նոյեմբերի 30։
[5] Ալիք, 1947, յունիսի 12։
[6] Ալիք, 1945, նոյեմբերի 28։
[7] Հայրենիք ամսագիր, 1940, մարտ, էջ 161։

հատվածների համար. մասամբ արտոնել եկեղեցիների, բայց ընդհանրապես չարտոնել դպրոցների վերաբացումը…

Հատկանշական է, որ այդ շրջանում գավառի «պաշտոնական» հայությունն ունեցել է ծխատեր քահանաներ Փոքր Հայքում և հարակից շրջաններում՝ Օրդովում, Կեսարիայում, Էվերեկ-Ֆենեսեում և Հարավարևմտյան Հայաստանի Տիգրանակերտ քաղաքում[1]: Միջոցների սղության պատճառով բավական դժվար է եղել գավառահայության կրոնական սպասարկումը. այն լայն ցրվածությամբ էր բնակվում զանազան մանր ու խոշոր գյուղակներում ու գյուղաքաղաքներում:

Այս ժամանակահատվածում Էվերեկ-Ֆենեսե գյուղաքաղաքում, ուր ապրում էր շուրջ 1000 հայ (100 ընտանիք), գործել է Ս.Թորոս եկեղեցին՝ իր *թուրքախոս քահանայով*[2]: Նույն քահանայի միջոցով հոգևոր սպասարկություն է տրվել նաև Կեսարիայի մյուս գյուղաքաղաքին՝ 20 տուն հայություն ունեցող Թալասին, որն ունեցել է կիսավեր եկեղեցի[3]:

Մ.Մարկոսյանը «Մեր այդ կողմերը» գրքում գրում է. «Տէր Արսէնը Տիգրանակերտի միակ հայ քահանան էր հայոց: Ուրիշ մը չկար: *Դերիկի, Լիչէի, Էլազիգի, Մալաթիայի* ա՛լ քահանան էր: Տարին մէկ երկու անգամ այդ կողմերն ալ կերթար, *հաւաքաբար* մկրտություն կամ պսակ կը կնքէր կու գար» (ընդգծումները մերն են- Կ.Խ.)[4]:

Բացառիկ կամ, ինչպես բնորոշում է «Հայրենիք» ամսագիրը» 1939թ., «բախտավոր իրադարձության» հանգամանք կարելի է համարել Հմայակ ծայրագույն վարդապետի այցելությունն Անկարայի հայությանը: Նրան տարել են հայկական *երկու* գերեզմանոցներ, ուր հայ բարեպաշտների ներկայությամբ կատարվել է հոգեհանգստյան արարողություն: Վարդապետը նաև կատարել է մի հանդիսավոր պսակադրության կարգ՝ 200 հայերի ներկայությամբ, և մկրտել մի քանի երիտասարդների[5]:

«Սվազի, Ամասիայի, Թոքատի, Անկարայի, Յոզղաթի, Կոնիայի, Խարբերդի և Մալաթիայի մեջ ապրող Հայ Առաքելական Եկեղեցու զավակները,- կարդում ենք «Ժամանակի» 1945թ. համարներից մեկում,- հոգելույս Նարոյան պատրիարքի օրերից սկսյալ մնացել են առանց հոգևոր մխիթարության»[6]: Հեղինակը, շարունակելով բուռն քննադատությունը պատրիարքարանի հասցեին, արծարծում է հետևյալ տրամաբանությունը. «Ինչպես որ Կեսարիայում, Տիգրանակերտում, Էվերեկ-Ֆենեսեում և Օրդովում ցարդ հնարավոր է եղել

[1] Հայրենիք տարեգիրք-Տօնացոյց, Բոստոն, 1945, էջ 263:
[2] Հայրենիք ամսագիր, 1938, օգոստոս, էջ 170:
[3] Նույն տեղում:
[4] *Տեմիրճեան Ս.Ծ.,* Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատոր Ա, Միչիգան, 1994, էջ 398:
[5] Հայրենիք ամսագիր, 1939, մայիս, էջ 168:
[6] Ալիք, 1945, նոյեմբերի 21:

քահանաներ պահել և այդ շրջանների հոտի հոգևոր մատակարարությունը ապահովել, այնպես էլ հնարավոր է գլուխ բերել քիչ վերում հիշված վայրերի մատակարարությունը»[1]:

Հոգևոր մատակարարման ուշացման հետևանքով, թուրքացմանը զուգահեռ, առկա էր նաև հունացման վտանգը. «Սվազի մեջ ժողովուրդը մնացել է անտեր,- գրում է «Ժամանակը»,- մինչև օրս հույն կրոնավորներն են թաղում մեր մեռելներին և մկրտում մանուկներին: Բնական է, որ այնտեղի հայությունը սկսի հաճախել հունական եկեղեցի և դավանել օրթոդոքս դավանանքը»[2]:

Որոշ փաստերից էլ պարզվում է հոգևոր մատակարարման գործին սատարելու հայության բուռն ցանկությունը: Այս երևույթը դրսևորվում է հետևյալ տեղեկության մեջ. «Հմայակ ծ. վարդապետը ժողովրդի ջերմ փափագի համաձայն խնդրել է, որպեսզի պետական լեզվին հմուտ մի եկեղեցական ուղարկվի Անկարա: *Հոգևոր հովվի սնունդը խոստացել է հայթայթել մի հայ ճաշարանատեր…*» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[3]:

Պետք է ասել, որ այս ժամանակահատվածի մասին վիճակագրական տեղեկությունները պակաս են: Կեսարիայի հոգևոր հայր Հայկազուն ավագ քահանա Կարապետյանը գավառի հայության մասին տալիս է վիճակագրական որոշ տվյալներ[4], ըստ որոնց, 1946թ. դրությամբ, Արևելյան Թուրքիայի 58 քաղաքներում և շրջակա գյուղերում, փաստորեն, վերապրել են թվով 15.900 «պաշտոնական» հայեր. 13.300-ը՝ Փոքր Հայքում և հարակից շրջաններում և 2600-ը՝ Հարավարևմտյան Հայաստանում: Նշենք նաև այն փաստը, որ Տեր Հայկազունը հետագա (հավանաբար՝ 1947թ. վերջերին) այցելությունների արդյունքում Անատոլիայի հայության թվաքանակը ներկայացրել է 20 հազար[5]: Այս հավելումը, բնականաբար, բնակչության բնական աճից չէ. հավանաբար նա հայտնաբերել է նորանոր հայ ընտանիքներ և հայաբնակ գյուղեր:

«Պաշտոնական» հայության առավել մեծ թվի մասին է վկայում Կ.Պոլսից Բաղդադ ժամանած «մի ազգային», որը Բաղդադի «Գոյամարտ» թերթի իր ասուլիսում գավառի հայության թիվը ներկայացնում է 40 հազար: Այդ հատկանշական ասուլիսում ասվում է, որ ամենախիտ հայ բնակչությամբ վայրեր են Տիգրանակերտը, Կեսարիան, Էվերեկը, Օրդուն, Մալաթիան, Ամասիան և Սվազը: «Վան բնաւ չկայ, Էրզրում շատ քիչ, Խարբերդ չկայ, Հաթայ ալ քիչ մը»,- ասում է պոլսահայ ազգայինը[6]: Վանի և մանավանդ Խարբերդի մասին նրա ակնարկներից երևում է, որ խոսքը միմիայն «պաշտոնական» հայության

[1] Նույն տեղում:
[2] Ալիք, 1945, նոյեմբերի 29:
[3] Հայրենիք ամսագիր, 1939, մայիս, էջ 168:
[4] Հայրենիք տարեգիրք-Տօնացոյց, 1947, էջ 242-244:
[5] Ալիք, 1948, փետրուարի 23:
[6] Ալիք, 1951, յունուարի 25:

մասին է և ոչ թե կրոնափոխ կամ այլախոս հայերի։

Նման մոտեցմամբ «Ալիքը», հիմնվելով Կ.Պոլսի հայկական մամուլի տվյալների վրա, սույն ժամանակահատվածի գավառահայության թվաքանակը ներկայացնում է 50 հազարից պակաս[1] և նշում, որ բազմաթիվ հայ ընտանիքներ են գաղթում Կ.Պոլիս։

Թուրքիայի պետական մարդահամարի տվյալները ցույց են տալիս, որ այս ժամանակահատվածում «պաշտոնական» հայերի թիվը եղել է 57.559, որից 31.617-ը՝ կանայք[2]։ Աղբյուրում շեշտվում է «ոչ իսլամ» լինելու հանգամանքը։

«Արարատը» 1950թ. հունվարի 30-ի համարում հաղորդում է, որ 1945թ. դեկտեմբերին Անկարայից ավելի քան 200 հայ ընտանիք է աքսորվել անհայտ ուղղությամբ[3]։ Այս բացահայտ բռնարարքի դրդապատճառներն, անտարակույս, պիտի փնտրել Ինոնյուի կառավարության հակահայ քաղաքականության համատեքստում, ինչպես նաև Թուրքիայի հետպատերազմական շրջանի քաղաքական բարդ իրավիճակում, ընդ որում՝ ծայրահեղ աջերն իրենց նպատակներին հասնելու համար հաճախ անկանխատեսելի իրավիճակներ էին ստեղծում և իշխանություններին կանգնեցնում փաստի առջև։ Հիշենք, որ այդ ժամանակ ծայրահեղ աջերը մեծ աղմուկ էին բարձրացրել՝ դեպի Խորհրդային Հայաստան «արտագաղթի» ակցիան ձախողելու նպատակով։

Հետպատերազմյան շրջանում Խորհրդային Միության արտաքին քաղաքականության օրակարգ մտցվեց Կարս-Արդահան-Օլթիի պահանջը, որն ինչպես Թուրքիային, այնպես էլ Արևմտյան ամբողջ ճամբարին նոր մարտահրավերներ ներկայացրեց և կտրուկ սրեց իրավիճակը։ Թուրք-խորհրդային հարաբերությունների բարդացման ու լարման հետևանքով նկատելի են դառնում ճնշումների սաստկացման երևույթներ։ Հատկապես Կարսի և Արդահանի պահանջատիրության ուղղությամբ խորհրդային արտաքին քաղաքականության ակտիվությունն Ինոնյուի կառավարության հակահայ քաղաքականությանը նոր լիցք հաղորդեց և նրան մղեց այս անգամ թուրքահայության անունից «կոչեր» հրապարակելու հայապատկան հողատարածքների պահանջատիրության դեմ։

Թերևս, սրա ազդեցության տակ ամերիկյան «Քլիվլենդ փլեյն դիյլըրի» վերլուծաբան Սփենսըր Դ. Էրվինը փորձում էր թերագնահատել «հպարտ ու հզոր հայ ժողովրդի» թվաքանակը խնդրո առարկա շրջաններում. «Այսօր հայերի թիվը փոքր է Կարսի և Արդահանի շրջաններում, Թուրքիայից բոլոր օտար տարրերին ջնջելու թուրքական քաղաքականությունը հաջողել է»[4]։

[1] Ալիք, 1951, սեպտեմբերի 10։
[2] Ալիք, 1948, յունուարի 13։
[3] Արարատ, 1946, յունուարի 4։
[4] Ալիք, 1945, հոկտեմբերի 22։

«Նյու Յորք վորըլդ թելեգրամ»-ի աշխատակից և Թուրքիայի ու թուրքական հարցերի մասնագետ Դենինը, սակայն, իր թուրքամետ հոդվածներից մեկում («Թուրքիան վտանգի տակ»), վերլուծելով Թուրքիայի պետական, տնտեսական և ռազմական տկարությունները թուրք-խորհրդային հարաբերությունների ոլորտում, մտահոգություն էր հայտնում, թե Թուրքիայի պետականության տկարացման մեթոդներից մեկը կարող էր լինել թուրքերի դեմ փոքրամասնությունների լարումը, և շեշտում, որ «Արևելյան շրջաններում ապրում են *քրդեր, հայեր և կովկասյան ցեղեր*» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[1]:

Իսկ Կահիրեի «Մասրի» թերթի լոնդոնյան թղթակիցը 1948թ. սեպտեմբերի 10-ի համարում մանրամասնություններ է հաղորդում Անկարայում կայացած թուրք-ամերիկյան գաղտնի տեսակցության մասին, որի նպատակն է եղել «պաշտպանության» գոտի ստեղծել Դարդանելից մինչև իրանական Ատրպատականը: Այդ հրապարակումից մեջբերում է կատարել «Յուսաբերը». «Ամերիկյան առաքելությանը մտահոգող երկրորդ պատճառը ոչ թուրք փոքրամասնությունների պարագան է, որոնք բնակվում են Կարսի, Արդահանի և Արդվինի սահմանամերձ շրջաններում, այսինքն՝ քրդերը և հայերը: *Այս վերջինները* մտադիր են ծառայել սովետներին և անկարգություններ ստեղծել» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[2]:

Թե ինչպիսի «անկարգություններ» պիտի տեղի ունենային կամ ինչ ատրիբուտներով պիտի առաջնորդվեին նրանք, մեզ դեռ պարզ չէ: Սակայն առկա փաստերը բնութագրում են օրվա քաղաքական ուժերի խոշոր շահակցությունը հայապատկան տարածքների անջատման հարցում:

1950-60 թվականներ

Մի շարք վկայություններ բավարար հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ այս տասնամյակում՝ Բայարի նախագահության և Մենդերեսի վարչապետության օրոք, հայությունը հասցրել է փոքր-ինչ շունչ քաշել՝ գոյատևելու համար: Եթե բացառենք ծայրահեղական աջ ուժերի կողմից հրահրված 1955թ. սեպտ. 6-ի և 7-ի հակահույն և հակահայ ամբոխային բռնարարքները, Կ.Պոլսում և Իզմիրում հայությունն այս ժամանակահատվածում գտնվել է համեմատաբար տանելի պայմաններում՝ համայնքային քայքայված կյանքը վերակազմակերպելու առումով: Շնորհք արքեպիսկոպոսը նույնիսկ «իսկական ժողովրդավարության» և «փոքրամասնությունների ոսկեդար» է անվանել այս ժամանակահատվածը[3]:

«Մինչև 1950թ.,- գրում է «Ալիք» օրաթերթը,- Անատոլիայի հայերը Պոլսի հայերի հետ հարաբերության միջոցներ չունեին՝ տիրող սարսափի և միջոցնե-

[1] Ալիք, 1947, օգոստոսի 25:
[2] Յուսաբեր, Կահիրէ, 1948, սեպտեմբերի 13:
[3] Ալիք, 1980, դեկտեմբերի 18:

րի չգոյության պատճառով»[1]: Սահակ ծայրագույն վարդապետ Փափազյանը 1952թ. հուլիսին կատարած հովվապետական այցելության տպավորություններում, ակնարկելով Յոզղաթի 20 հայ ընտանիքների վիճակը, ընդգծում է նաև, որ 30 տարուց ավելի հոգևորական չի գնացել այնտեղ[2]:

Կ.Պոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Նարոյանի մահվանից (1944թ.) ավելի քան յոթ տարի հետո միայն Թուրքիայի հայությանը նոր պատրիարք ընտրելու հնարավորություն տրվեց 1951թ.: Ընտրվեց Գարեգին արք. Խաչատուրյանը, որի ընտրությամբ աշխուժության լիցք հաղորդվեց Թուրքիայի հայության ազգային-հասարակական կյանքին: «Պոլսո պատրիարքարանը,- գրում է «Հայրենիքը»,- խոհեմ քայլերով ջանում է օգտվել դեմոկրատ կառավարության միջոցով տրված մի շարք թեթև «շնորհ»-ներից, ինչպես տեղ-տեղ սակավաթիվ հայկական եկեղեցիների վերադարձը և կրոնական պաշտամունքի ազատությունը: Դեռ շատ թույլ այս քայլերը պիտի ծառայեն մեր բեկորներին, որոնք իրենց ազգային գոյությունը պահպանելուց բացի, այլ ձգտում չունեն»[3]:

Այդ թեթև «շնորհ»-ների առաջին արդյունքներից կարելի է համարել Հաթայի երկու եկեղեցիների բացումը 1950թ. սկզբին[4]: Նույն շարքին պետք է դասել Բողազլյանի և Էրեյլի հայ համայնքներին գերեզմանոցային նոր տարածքների տրամադրման փաստը 1951թ.[5]: Սրա վերաբերյալ հետաքրքիր տեղեկության ենք հանդիպում Բեյրութի «Մասիս» շաբաթաթերթում, ուր ասվում է, որ Ամերիկայի սեբաստացիների հայրենակցական միությունը 1952թ. հատուկ պատվիրակ է ուղարկել Սեբաստիա՝ այնտեղի եկեղեցին վերանորոգելու և հնարավորության դեպքում այնտեղ դպրոց բացելու նպատակով[6]: Պատվիրակն «արտօնութիւն ստացած է թէ՛ եկեղեցին կառուցանելու և թէ՛ դպրոց բանալու,- գրում է «Մասիսը»:- Տէրտէր մը պահելու իրաւունքն ալ ստացած է: Տեղական իշխանութիւնները ֆրանսական քոլեջը տրամադրած են սեբաստացի հայուն, վերջինս մերժել է՝ ակնարկելով, թէ ֆրանսացիները օր մը կրնան տէր կանգնել անոր»[7]:

Կեսարիայի հայկական վարժարանի բացման համար ևս լավատես է եղել Տեր Հայկազունը և հավաստիացրել, որ վարժարանը աշխատանքը պաշտոնապես սկսելու է 1952թ. աշնանը[8]:

Մեզ դեռ հայտնի չեն մանրամասնությունները, թե ինչու չբացվեցին Սե-

[1] Ալիք, 1973, սեպտեմբերի 23:
[2] Ալիք, 1952, օգոստոսի 14:
[3] Հայրենիք ամսագիր, 1952, հոկտ., էջ 111:
[4] Ալիք, 1951, յունուարի 25:
[5] Ալիք, 1951, փետրուարի 1:
[6] Ալիք, 1952, օգոստոսի 14:
[7] Նույն տեղում:
[8] Ալիք, 1952, սեպտեմբերի 11:

բաստիայի և Կեսարիայի հայկական վարժարանները, սակայն կռահելի է, որ Թուրքիայի անգամ դեմոկրատական կոչված իշխանությունները չէին կամենում արտոնել Անատոլիայի խորքում հայկական վարժարանների վերաբացումը: Այնուամենայնիվ, ի տարբերություն Ինոնյուի բռնատիրության, «դեմոկրատ»-ներն այս ժամանակահատվածում ընթացք էին տալիս սահմանափակ թվով եկեղեցիների վերաբացմանն ու օծմանը, գերեզմանոցների և մյուս վագիֆների իրավական հարցերի դրական լուծմանը և, իհարկե, խոսքի սահմաններում արտոնում էին դպրոցների վերաբացումը…

Համեմատաբար ազատ ու խաղաղ պայմանների արգասիքները երևան են գալիս ամենատարբեր վկայություններում: Այսպես, օրինակ, 1951թ. Կ.Պոլսից ուղարկված քահանան Էրեյլիում կատարել է օրհնության արարողություն, պսակել վեց զույգերի և մկրտել 45 մանուկ[1]: Կամ, օրինակ, «Նոր Մարմարային» հաղորդած տեղեկության մեջ նշվում է Էվերեկում և Ֆենեսեռում (Կեսարիայի մոտակայքում) Ծաղկազարդ, Ավագ հինգշաբթի և Ս.Զատիկ տոների առթիվ կատարված առանձին արարողությունների և եկեղեցու՝ «խուռն բազմությամբ» լցված լինելու մասին[2]:

Զառայում նույնպես (Սեբաստիայի մարզի ծայրամասում՝ Արևմտյան Հայաստանին սահմանակից) առաքված քահանայի ձեռամբ 1951թ. պսակադրվել են հինգ զույգեր և մկրտվել 30 մանուկներ[3] և այլն:

Սույն ժամանակահատվածի մամլո լրատվությունից պարզվում է նաև, որ կանոնավոր և ակտիվ թղթակցական կապ է գոյություն ունեցել գավառների (օրինակ՝ Կեսարիա, Սեբաստիա, Զառա, Էրեյլի և այլն) և Կ.Պոլսի հայկական թերթերի, հատկապես «Նոր Մարմարա» և «Ժամանակ» օրաթերթերի միջև, ինչն ընդգծելի է և նկատառման արժանի: Այս կապի անմիջականությունը շոշափելու համար հետաքրքրական ենք համարում 1951թ. «Ժամանակ» օրաթերթից մեջբերված մի թղթակցություն, ուր ասվում է. «Մարտի 14-ին իրիկուն, աղօթելու համար երբ եկեղեցի կերթայինք, զարմանքով տեսանք, թէ Ս.Կիրակոսի մատռան ներսի ապակիները խորտակւած և գողութիւն պատահած է»[4]: Թղթակցությունների բովանդակությունից և անմիջականությունից կարելի է եզրակացնել, որ Պոլսի հայկական թերթերի թղթակիցների մի մասը գավառաբնակներ են եղել: Օրինակ՝ «Ժամանակում» հաճախ ենք հանդիպում թղթակցությունների, որ սկսվում են այսպես. «Սվազի մեր թղթակիցը, Ա.Նուբարը, կը գրէ…»[5] և այլն:

Գարեգին արք. Խաչատուրյանի ջանքերով 1953թ. հիմնադրվեց «Սուրբ

[1] Ալիք, 1951, փետրուարի 1:
[2] Ալիք, 1951, ապրիլի 23:
[3] Ալիք, 1951, օգոստոսի 13:
[4] Ալիք, 1951, ապրիլի 11:
[5] Ալիք, 1952, օգոստոսի 14:

Խաչ դպրեվանքը»։ Օշին Չիլինկիրը, ուշագրավ մանրամասնություններ ներկայացնելով Գարեգին արք. Խաչատուրյանի կենսագրությունից[1], պատմում է, թե ինչպես 1950-ականների «ժողովրդավարության անցքից» օգտվելով, տրապիզոնցի պատրիարքը մինչև կյանքի վերջին օրերը գերմարդկային նվիրվածությամբ հետամուտ էր զավառի հայ պատանիներին Կ.Պոլիս տեղափոխելու և նրանց հայեցի դաստիարակություն տալու ծանր, պատասխանատու և հաճախ վտանգավոր գործին։

Կ.Պոլիս բերված սաների կենսագրությունները քննելիս[2] պարզվում է, որ կեսարացի սաներին Պոլիս բերելու գործընթացն սկսվել է գրեթե դպրեվանքի հիմնադրության ժամանակ և շարունակվել մինչև 1970-ականները, Հարավարևմտյան Հայաստանի տիգրանակերտցի սաների դեպքում՝ մինչև 1980-ականները։ Պատմական Կիլիկիայի Սամանդաղ քաղաքից սահմանափակ թվով սաներ են բերվել 1970-ականներին։ Իրավիճակը միանգամայն այլ է Արևմտյան Հայաստանի համար, որտեղից սասունցի սաներ են բերվել ավելի ուշ՝ 1990-ականներին, և գործը, թերևս, շարունակվում է նաև այժմ։

Ի՞նչն է եղել այս գործի ծավալման անհամաչափության բուն պատճառը։ Դժվար է պատասխանը փնտրել զուտ փաստագրական ոլորտներում, բայց որոշ փաստերից կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի հերթական իշխանությունները զգայնություն են ունեցել վիլսոնյան սահմանների նկատմամբ և հավանաբար ծրագրված կերպով հայ եկեղեցական գործիչների առջև գծել են «կարմիր սահմաններ», որի հետևանքով գործնականում դժվարացել է նրանց մուտքը Արևմտյան Հայաստան։

Ի շարս Պոլսո մյուս ազգային հաստատությունների՝ «Սուրբ Փրկիչ» ազգային հիվանդանոցի վերաշխուժացումը ևս կարելի է համարել այս ժամանակահատվածի կարևոր ձեռքբերումը։ Վարուժան Քյոսեյանը նշում է, որ 1950թ. հիվանդանոցի հոգաբարձությունը նոր եռանդով է նվիրվել աշխատանքի և նախաձեռնել ժողովրդական հանգանակության շարաններ։ Եվ ժողովուրդը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքից և «վարլիկ վերգիսի» (ունեցվածքի) հարկային կապանքներից ազատվել էր արդեն և վերագտել առևտրական կյանքի բնականոն ընթացքը, ավելի մեծ ուշադրություն էր դարձնում հիվանդանոցի նյութական կարիքներին[3]։ Հիվանդանոցի նյութական բացը ծածկելու համար կազմակերպված ժողովրդական հանգանակության մնայուն գործին իր համեստ մասնակցությունն է բերել նաև գավառահայությունը[4]։

[1] Գիշերը առաւօտը իր մէջ կը կրէ, Ստամբուլ, 2003, էջ 27-45։
[2] http://www.surphac-tbrevank.org/sht/okul/arama.asp.
[3] *Քէոսէեան Վ.,* Յուշամատեան 160-ամեայ Ս. Փրկիչ հայոց հիւանդանոցի, Ստամբուլ, 1994, էջ 180 և 181։
[4] Ս. Փրկիչ, Ստամբուլ, 1953, մայիս, դ տարի, թիւ 45, էջ 28 և 1953, յունիս, թիւ 46, էջ 27։
Ստամբուլի «Ս. Փրկիչ» ազգային հիվանդանոցի նույնանուն պաշտոնաթերթի վերոհիշյալ երկու համարներում, նվիրատվությունների այունակում, ի շարս այլոց, գրված է «ՄԱՐՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՆՈՒԷՐՆԵՐ- Կեսարիայից Տէր Հայկազունի ձեռամբ 98 կիլօ ձաւար», «ԱՊՐԻԼԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՆՈՒԷՐՆԵՐ- Կեսարիայի քինյ ձեռամբ Փիլիպոս Արզումանեանից 80 կիլօ ձաւար, 100-ական լիրա նուիրել են տկն Երանուհի Խաչատուրեանը, Վռամշապուհ Ֆրանկիւլը և տկն Ատրինէ Ֆրանկիւլը, դոկտ Ա.Լոթիկեանի ձեռամբ՝ Զատկի առաւօտեան Անկարայի մէջ հաւաքուած պնակի հասոյթը»։

Մի հետաքրքրական փաստ ևս հաստատում է, որ Կեսարիայում 1950-ականներին շարունակվել են թեմական դրվածքն ու համայնքային կյանքը՝ իր առաջնորդական պաշտոնով. «Սուրբ Փրկիչ» ազգային հիվանդանոցի արտաքին բաժնի օգնական բժիշկ Վարուժան Բագինը մասնագիտական մի զեկուցման մեջ իմիջիայլոց գրում է. «Լ.Ք. անունով յոթ տարեկան մի աղջիկ, Կեսարիայից, *տեղի առաջնորդի* հանձնարարական նամակով, ազգային հիվանդանոց էր ուղարկվել» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[1]:

Կեսարիան՝ իր հայահոծ գյուղերով, այս ժամանակահատվածում շարունակել է մնալ որպես Փոքր Հայքի և հարակից շրջանների հայության հոգևոր կենտրոնը: Որոշ տվյալներով՝ Կեսարիա քաղաքի հայ բնակչության թիվը 1952թ. կազմել է 2020, իսկ գյուղերինը՝ 2000 մարդ[2]: «Ըստ իմ քաղած ստոյգ տեղեկութիւնների,- գրում է մի լիբանանահայ ուղևոր,- Կեսարիո բոլոր գիւղերուն մէջ ալ հայեր կան»[3]: Էվերեկի-Ֆենեսեն՝ իր ծխատեր քահանայով, և Թալասը՝ իր 15 տնվոր հայությամբ[4] հանդիսացել են Կեսարիայի կարևոր ավաններից:

Պետք է ասել, որ Կեսարիայի եկեղեցին, որ մինչ այդ իշխանությունների միջոցով առգրավվել և օգտագործվում էր որպես մթերանոց, գլխավորաբար Տեր Հայկազունի ջանքերի շնորհիվ վերադարձվել էր հայությանը և անցել բնականոն աշխատանքի[5]:

Կեսարիայի հայության սոցիալական կյանքում «դեմոկրատական» իշխանությունների օրոք ուրվագծվել են որոշ տեղաշարժեր: Վերոնշյալ լիբանանահայի ուղեգրությունից պարզվում է, որ Կեսարիայի հայերի մի մասն այս ժամանակահատվածում զբաղվել է երկրագործությամբ: Ինոնյուի իշխանությունները մասնավոր որոշմամբ արգելել էին հայերին առևտրով զբաղվել: «Դեմոկրատ» Մենդերեսի իշխանությունը վերացրել էր այդ արգելքը, և Կեսարիայի հայերն արդեն զբաղվում էին նաև վաճառականությամբ: «Առհասարակ ինքնապահ, աշխատասէր եւ հաւատարիմ քաղաքացիներ են,- գրվում է ուղեգրությունում,- եւ միևնոյն ատեն շատ լաւ հայեր են»[6]:

Սեբաստիայի հայության վիճակը, ընդհանուր գծերով, նմանվում էր Կեսարիային: 3000 հայ բնակչություն ունեցող այս շրջանի գյուղերում դեռ 1952թ. ապրել են հայ ընտանիքներ. Գաչիսարում՝ 10 տուն, Բաբերդում՝ 5, Խորասանում՝ 4, Տուղասարում՝ մեկ տուն: Մուրադի գյուղում՝ Կովտունում, մնացած է եղել մեկ հայ ընտանիք, իսկ Դանիել Վարուժանի ծննդավայրում՝ Բրգնիկում, ընդամենը մեկ հայ ջրաղացպան, որի օգնությամբ էլ լիբանանա-

[1] Ս. Փրկիչ, 1950, մայիս, ա տարի, թիւ 9, էջ 20:
[2] Ալիք, 1952, սեպտեմբերի 11:
[3] Նույն տեղում:
[4] Ալիք, 1952, փետրուարի 18:
[5] Ալիք, 1952, սեպտեմբերի 11:
[6] Նույն տեղում:

հայ ուղևորին հաջողվել է կեսգիշերին մի բուռ հող վերցնել Վարուժանի պապենական կիսավեր տնից[1]։ «Մոլեռանդ թուրքեր են Բրգնիքի բնակիչները,- ասել է հայ ջրաղացպանը,- և Վարուժանի անունը լսել չեն ուզեր»[2]։

Սեբաստիայի մարզում գտնվող Կեմերեկ գյուղի մասին 1950-ականների իր հուշերում հետաքրքիր տեղեկություն է հաղորդում թուրքահայ գրող Հակոբ Արսլանյանը. «Երբ «վարպետ» (ուսթա) ըսի, անպայման հայ կը հասկցի,- գրում է նա,- որովհետեւ Անատոլուի գիւղերուն մէջ հայերն են, որ կը զբաղին արհեստներով եւ վարպետ կը յորջորջին»[3]։

Պատմական Կիլիկիայում Ալեքսանդրեթի եկեղեցու օծումը կատարվել է պատրիարքական փոխանորդ Տեր Արամ քահանա Պասմաճյանի ձեռամբ՝ 1952թ. ապրիլի 26-ին[4]։ Այս երևույթը կարելի է բացառիկ հայանպաստ երևույթներից համարել խնդրո առարկա հայության կյանքում։

Եկեղեցական սպասարկությունների իմաստով հոգևոր կյանքը տարբեր է եղել Հարավարևմտյան Հայաստանում. «Խարբերդի և Տիգրանակերտի շրջաններում ապրող մեր փոքրաթիվ հայրենակիցները,- գրում է «Հայրենիք» ամսագիրը,- երկար ժամանակ է, որ փափագում են մի հոգևոր հովիվ ունենալ, սակայն պատրիարքարանը ընթացք չի տալիս դիմումներին»[5]։ Խարբերդի մոտակայքում գտնվող պատմական Դևրիկում (Դիվրիկի), համաձայն 1955թ. տվյալների, եղել է հինգ հայ ընտանիք[6]։ Այդուհանդերձ, Տիգրանակերտն այս ժամանակահատվածում ունեցել է Ս.Կիրակոս եկեղեցու ընտրովի խորհուրդ[7]։

Հայտնի պատճառներով Արևմտյան Հայաստանի մասին տեղեկությունները համեմատաբար ավելի պակաս են և կցկտուր։ Գիտենք, որ 1950-ականներին թուրք-խորհրդային հարաբերությունների լարվածության պայմաններում տեղի է ունեցել արտահոսք, հատկապես սահմանամերձ շրջաններից։ Սույն արտահոսքի լույսի տակ տեղեկացվում ենք նաև Արևմտյան Հայաստանում բնակվող հայության մասին. «Կարսի, Արդահանի եւ ընդհանրապէս սահմանամերձ շրջաններու թուրք բնակչութիւնը,- գրում է ամերիկահայ ուղևորը,- կը գաղթէ դէպի արեւմտեան, կեդրոնական Անատոլու, մօտալուտ պատերազմի վախէն մղուած, իսկ հայերը կը նախընտրեն Կ.Պոլիս կեդրոնանալ»[8]։

Պետք է ասել, որ «պատերազմի վախեն» զատ, սոցիալական մղումներով ևս, այս ժամանակահատվածում սկզբնավորվել է հայության գաղթ գյուղերից դեպի քաղաքներ։ Ըստ Օշին Չիլինկիրի՝ «առավելաբար փոքր քաղքենական

[1] Ալիք, 1952, սեպտեմբերի 14-17։
[2] Նույն տեղում։
[3] *Տեմիրճեան Ս.Ծ.,* Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատոր Ա, Միչիգան, 1994, էջ 425։
[4] Ալիք, 1952, մայիսի 21։
[5] Հայրենիք ամսագիր, 1952, փետրուար, էջ 109։
[6] *Հակոբյան Թ.Խ.,* Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 240։
[7] Ալիք, 1951, փետրուարի 1։
[8] Ալիք, 1952, օգոստոսի 14։

նկարագիր պարզող» հայության այս հատվածը, որ մայրենի լեզվի ուսումնառման հնարավորությունից զուրկ էր, նախ գաղթում էր մեծ քաղաքներ, ապա աստիճանաբար կենտրոնանում Կ.Պոլսում[1]:

Այս իմաստով կարելի է նշել Հարավարևմտյան Հայաստանում գտնվող Արաբկիրի պարագան, որի մասին նշվում է «Ազդակի» 1952թ. համարներից մեկում. «Ներկայիս Արաբկիրին մէջ,- գրում է 40 օր Թուրքիայում օթևանած մի բեյրութահայ,- 120 հայ ընտանիք կը գտնուի: Այս թիւը քանի մը տարի առաջ աւելի մեծ է եղած: Սակայն, հետզհետէ մեր հայրենակիցները փոխադրուած են Պոլիս, Մալաթիա եւ այլ շրջաններ»[2]: Նույն աղբյուրն ակնարկում է նաև Մալաթիայի 400 հայ ընտանիքների մասին՝ շեշտելով, որ «Ըստ որոշ տեղեկութիւնների՝ հեռաւոր գիւղերում եւս բազմաթիւ հայեր կը գտնվեն»[3]:

Մի ուխտավոր 1952թ. այսպես է պատմում իր տեսած Սեբաստիայի մասին, ուր «այժմ 3000 հայեր կապրին, որոնք զարմանալի կերպով հայախօս են, բայց հայերէն գրել-կարդալ չեն գիտեր: Հազարաւոր հայեր դեռ մնացած են գաւառին գիւղերուն մէջ, եւ դատապարտուած անշուշտ կորսուելու, եթէ մի նոր կեանք չսկսի անոնց համար»[4]:

Այս ժամանակահատվածում հատկապես նշելի են 1955թ. սեպտեմբերի 6-7-ի հակահույն և հակահայ բռնարարքները: Թեև հետագայում, հատկապես գեներալ Գուրսելի իշխանության օրոք, պետականորեն ճիգ էր արվում դեպքի ամբողջական պատասխանատվությունը Բայար-Մենդերեսի «դեմոկրատական» իշխանություններին վերագրելու ուղղությամբ, այնուամենայնիվ, այսօր մի շարք ապացույցներից և կենդանի վկայություններից պարզվում է, որ բռնարարքների իսկական հեղինակը եղել է օրվա պանթուրքական-հետադիմական ընդդիմությունը:

Այս իրադարձությունների մանրամասնությունները և պարզաբանումները թեև ուղղակի կերպով չեն առնչվում մեր նյութին, սակայն դրանք արծարծում ենք՝ հիմնավորելու համար սույն ժամանակահատվածում իշխանությունների դեմ պանթուրքական-հետադիմական ընդդիմության վարած քաղաքականությունը, որի կարևոր առանցքներից էր հակահույն և հակահայ բռնարարքների միջոցով ներքին ապակայունացման և արտաքին վարկաբեկման տեսարաններ հրահրելը:

Քաղաքական այս տխուր թատերգությունից անմասն չմնացին նաև գավառահայերը: Թուրք-կիպրական ընդհարումների ժամանակ հրահրված պանթուրքական-հակահայ քարոզչության հետևանքով 1958թ. Կեսարիայի Քեռհնե գյուղում յոթ հայ ընտանիք ամբողջապես բնաջնջվեց[5]:

[1] Գիշերը առաւօտը իր մէջ կը կրէ, Ստամբուլ, 2003, էջ 35:
[2] Ալիք, 1952, հոկտեմբերի 2:
[3] Նույն տեղում:
[4] Հայրենիք ամսագիր, 1952, հոկտ., էջ 111:
[5] Ալիք, 1958, դեկտեմբերի 23:

Մեր նորագույն պատմագիտության մեջ, թերևս, չարձանագրված այս վանդալիզմի մասին կենդանի վկայություններից պարզվում է, որ դեպքի հեղինակները, որոնք Կեսարիայի հայության հարուցած դատի հիմամբ ձերբակալվել և մեկուսացվել էին Անկարայում, բացահայտել են Քեռհնե գյուղի մուխթարի (գյուղապետ) պատասխանատու դերը յոթ անմեղ հայ ընտանիքների սպանության գործում: «Գիւղի մոլեռանդ տարրերը,- ասում է Կեսարիա մեկնած հայ շրջիկը,- դաշոյններով, բիրերով, սոփաներով ջարդի մատնեցին հողի աշխատաւոր եօթ հայ ընտանիքները»[1]: Ձեռագիրն, ըստ էության, պարզ է, որոշ և հայությանը ծանոթ…

«Պայքարը» իր 1959թ. հոկտեմբերի 27-ի և 28-ի համարներում հրապարակած տվյալներով մեզ հետաքրքրող տարածքներում ապրող հայերի քանակական կազմի մասին հետևյալ պատկերն է ներկայացնում[2] *(Աղ. 3).*

Աղյուսակ 3

Տարածք	Քաղաք	Թվաքանակ
Արևմտյան Հայաստան	Էրզրում	390
	Բիթլիս	390
	Գյումուշխանե	300
	Վան	68
	Տրապիզոն	50
Հարավարևմտյան Հայաստան	Խարբերդ	5860
	Տիգրանակերտ	5100
Պատմական Կիլիկիա	-	1080
Փոքր Հայք և հարակից շրջաններ	Սեբաստիա	9500
	Կեսարիա	3000
	Անկարա	2000
	Գաստամոնու	2000
	Կոնիա	1000
	Սինոպ	1000
	Սամսուն	500
	Էրեյլի	300
	Օրդու	250
	Քյոթահյա	120

[1] Նույն տեղում:
[2] *Գասպարյան Ս.,* Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 69:

1960թ. Թուրքիայի պաշտոնական մարդահամարի համաձայն՝ այդ ժամանակահատվածում Մարդինում ապրում էր 10.232, Գաստամոնու քաղաքում՝ 1204 և Սեբաստիայում՝ 565 հայ[1]:

Իմիջիայլոց, Մարդինի և Տիգրանակերտի հայ կաթողիկե բնակչության վերաբերյալ տեղեկությունների հանդիպում ենք Ներսես արք. Թայրոյանի ուղեգրության մեջ, որը տպվել է Բեյրութի «Մասիս» շաբաթաթերթի 1952թ. համարներից մեկում: Սրանից պարզվում է, որ 1950-ականների սկզբին Մարդինում եղել է 80, իսկ Տիգրանակերտում՝ 12 հայ կաթողիկե ընտանիք[2]:

1960թ. Թուրքիայի մարդահամարի ամբողջական տվյալները տալիս է Աբդուլա Յամանը՝ Անատոլիայի նահանգներում ապրող հայերի թիվը ներկայացնելով 53.173[3]: Պոլսահայ աղբյուրները մոտավոր կերպով հաստատում են սույն տվյալը. Տիգրանակերտի, Կեսարիայի, Էվերեկ-Ֆենեսեի, Մալաթիայի և Ալեքսանդրեթի հայության թվաքանակը նշում են 40 հազար, իսկ Գաստամոնուի և Սև ծովի հայության թիվը՝ 10-ից 15 հազար[4] (գումարը՝ 50-ից 55 հազար):

Այս ժամանակահատվածի տվյալների անորոշությունը և դրանց միջև հակասությունն ակնարկելի է դառնում հատկապես Հարավարևմտյան Հայաստանի պարագայում: Օրինակ, ըստ մի աղբյուրի, հայության կարևոր կենտրոններից մեկը՝ Խարբերդը, 1960թ. ունեցել է միայն 1000 հայ բնակիչ[5], սակայն «Պայքարի» տվյալներում շուրջ վեց հազար հայություն է բերվում:

Հակասությունների մի մասն, անշուշտ, պետք է վերագրել «պաշտոնական» և «թաքուն» հայության բնորոշման հարցին: Այս նույն տեսակետն ունի «Դրօշակի» խմբագրապետ Նազարեթ Պերպերյանը: Նա իր «Հայասպանութիւնը տեղի չունեցաւ միայն 1915-1917 թւականներուն» հոդվածում, ի մի բերելով մի շարք հետազոտողների տվյալները, եզրակացնում է, որ 1960թ. Թուրքիայի պաշտոնական մարդահամարում «դիտմամբ է անտեսւել ոչ-հայախօս հայերի համրանքը»[6]:

1960-71 թվականներ

Այս շրջանը հանրապետական Թուրքիայի պատմության մեջ կարելի է համարել զինվորական խունտայի բռնատիրության շրջան՝ գեներալ Գուրսելի գլխավորությամբ: Մենդերեսի շրջանի համեմատաբար ազատ պայմաններին հաջորդող այս շրջանում հայությունն առավել դանդաղ կշռույթներով շարունակել է իր խիստ սահմանափակ կյանքը:

[1] Դրօշակ, Աթենք, 1989, օգոստոսի 30, թիւ 1231, էջ 89:
[2] Ալիք, 1952, յունուարի 14:
[3] *Կիրակոսյան Ջ.,* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, էջ 445:
[4] Ալիք, 1959, սեպտեմբերի 6:
[5] *Հակոբյան Թ.Խ.,* Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 135:
[6] Ազդակ շաբաթօրեակ, Բէյրութ, 1984, մայիսի 5, էջ 279:

Թուրքահայ կյանքին քաջածանոթ Մինաս Թեոլեոլյանը «Արեւմար մը՝ Թուրքիոյ հայոց հանրային եւ մշակութային հորիզոններու վրայ» հոդվածում, բնութագրելով 1960թ. հեղաշրջումից առաջ և հետո Թուրքիայի իշխանությունների վարած քաղաքականությունն ու կեցվածքը հայության նկատմամբ, հիմնավորում է, որ թեև հայամերժությունն առաջ էլ է գոյություն ունեցել, սակայն հեղաշրջումից սկսյալ «այդ բարդոյթը շատ աւելի խորացաւ»: «Մենդերեսյան իշխանության հաշվեհարդարից, ապա դեմիրելյան կառավարության հարթումից և երեք պետական հարվածներից հետո (1960-1980թթ.),- գրում է Մինաս Թեոլեոլյանը,- օղակը տարեցտարի ավելի է սեղմվում Թուրքիայի հայկական մնացորդացի հանրային-մշակութային կյանքի բոլոր մարզերում»[1]:

60-ականների թուրքահայ կյանքի վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ հաղորդող վաստակավոր մտավորական Հրանտ Սամուելը գրում է. «Ցիրուցան հայեր են ապրում մի շարք գլխավոր քաղաքներում - Կեսարիա, Անկարա, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Մալաթիա և այլն, մի մասն էլ՝ գյուղերում»[2]:

Այդ ժամանակահատվածում Ս.Խաչ դպրեվանքի աշակերտության ճնշող մեծամասնությունը բաղկացած է եղել գավառներից բերված սաներից[3]: Դպրեվանքը 1961-62 ուսումնական տարում ունեցել է միջնակարգի 18 շրջանավարտ, որոնցից ընդամենը երեքն են եղել Կ.Պոլսից, Տիգրանակերտից՝ 7, Կեսարիայից՝ 2 և մեկական՝ Գաստամոնուից, Սվազից, Մուշից, Թոքատից ու Զիլեից[4]: Սրանից կարելի է պատկերացում կազմել այդ ժամանակահատվածի «պաշտոնական» հայության ցրվածության չափի մասին:

1961թ. Կ.Պոլսի հայոց պատրիարք ընտրվեց Շնորհք եպիսկոպոս Գալուստյանը, որի 29-ամյա պատրիարքության շրջանում թուրքահայ ազգային-հասարակական կյանքում տեղի ունեցան բավական լուրջ ու բախտորոշ բարեփոխումներ:

Շնորհք պատրիարքը 1970թ. սեպտեմբերի 15-ին Բուենոս Այրեսում ասում էր. «Թուրքիայի ներքին գավառներում բնակվող հայերի ընդհանուր թիվը շուրջ 25 հազար է: Նրանք թեև հայերեն չեն խոսում և կրթական հաստատություն անգամ չունեն, սակայն իրենց հայ են զգում և *հավատարիմ են մնում իրենց կրոնին,* անվանը և ավանդույթներին… Դժվար պայմանների տակ են ապրում նրանք, և եթե անհրաժեշտ միջոցների չդիմվի, նոր սերնդին, որ բավական մեծ թիվ է կազմում, հայության համար իսպառ կորսված պիտի նկատել» (ընդգծումները մերն են- Կ.Խ.)[5]:

[1] Դրօշակ, Աթենք, 1988, յուլիսի 6, էջ 11:
[2] Ալիք, 1970, յունուարի 12:
[3] Ալիք, 1970, նոյեմբերի 10:
[4] Ամենուն տարեգիրք, Բէյրութ, 1963, էջ 741:
[5] Ալիք, 1970, նոյեմբերի 10:

Շնորհք պատրիարքը, ինչպես ասվեց, հստակ զանազանում էր Թուրքիայի հայության խմբերը, հետևաբար՝ 25 հազար թվաքանակը գիտակցաբար է վերագրում *կրոնին հավատարիմ մնացած* կամ մեր սահմանած՝ «պաշտոնական» հայությանը: Նման խմբավորման գիտակցումը կարելի է տեսնել «Յառաջ»-ի 1969թ. հունվարի 19-ի համարում. «Թուրքիայի ներքին գավառներում ապրում են շուրջ քսան հազար հայեր… Նրանց վիճակը ողբալի է: *Սրանցից բացի՝ տակավին կան թուրքացած հայեր, որոնց թիվը հայտնի չէ»* (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[1]:

Վիճակը դարմանելու մտադրությամբ Կ.Պոլսում կազմվել էր մի հանձնախումբ, որի պարտականությունն էր ընդհանրապես զբաղվել ներքին գավառների հայության հարցերով և մասնավորաբար՝ նոր սերնդով[2]: Հատկանշական է, որ պետական մարմիններն էլ են «մտահոգվել» նման հարցերով, ինչը ստիպել է նրանց 1962թ. կյանքի կոչել «փոքրամասնությունների հարցերով» զբաղվող հատուկ ենթահանձնախումբ, որը լուծարվեց քառասուն տարի անց՝ 2004թ. փետրվարին:

1969թ. կիսաթույլատրելի պայմաններում պատրիարքին հաջողվել է այցելել Կեսարիայի, Մալաթիայի, Տիգրանակերտի, Ալեքսանդրեթի (Իսկենդերուն) և Մուսա լեռան միակ հայաբնակ Վագըֆ գյուղի համայնքներ: Այնուամենայնիվ, պատրիարքը հնարավորություն չի ունեցել այցելել Կարնո (Էրզրում), Սեբաստիայի, Խարբերդի, Մշո և այլ վայրերում ապրող հայ բեկորներին[3], որոնց թիվն այդ ժամանակ, համաձայն որոշ տվյալների, հաշվվում էր շուրջ 250 հազար[4]:

Սա հենց այն «կարմիր սահմաններից» է, որով ակնհայտ է դառնում պետական զգայնությունը Արևմտյան Հայաստանի և հարակից մարզերի նկատմամբ:

Սույն ժամանակահատվածի հայության հասարակական կյանքի մասին կան հետաքրքիր վկայություններ: Օրինակ՝ Կ.Պոլսի պատրիարքարանից Տիգրանակերտ ուղարկված Տ. Շավարշ Պալըմյանն իր տպավորություններում մանրամասն նկարագրում է մասնավորաբար այն ազգային ոգին, որ «տեսել է Տիգրանակերտում մնացած երկու հազար հայերի մոտ: Նրանք ընդհանրապես

[1] Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1969, թիվ 3, էջ 257:

[2] Ալիք, 1970, նոյեմբերի 10:

[3] Ռաֆֆի տարեգիրք, Թեհրան, 1970, Բ տարի, էջ 511:

[4] Հայրենիք ամսագիր, 1961, ապրիլ, էջ 80: «Հայրենիք» ամսագրի սույն համարում կարդում ենք «Պոլսոյ «Մարմարա» թերթի աշխատակից Կ.Մուրադեանը, որ վերջերս շրջագայել է Անատոլիայի հայաբնակ վայրերը, մօտ 250.000 է հաշւում մեր հայրենակիցների թիւը՝ հիմնւելով մի շարք տեւալների վրայ»: Հոդվածագիրը չի նշել այդ տվյալները, սակայն Թուրքիայի բազմաթիվ քաղաքների հայ բնակիչների մասին տալիս է հետաքրքրական տեղեկություններ. «Ընդհանուր երևոյթը այն է, որ մեր այդ ցրւած հայրենակիցները շատ քիչ տեղերում միայն եկեղեցի ունեն, իսկ ոչ մէկ տեղում հայկական դպրոց: Հետևաբար, այսօրւայ կացութեամբ, նրանք դատապարտւած են կորցնելու իրենց լեզուն և ազգային գիտակցութիւնը»:

պահել են իրենց հին, ավանդական սովորությունները: Օրինակ՝ նախ տղամարդիկ են ճաշում, ապա կանայք՝ գետնին լայն սփռոց փռելով»: Պալըմյանն անդրադառնում է նաև նրանց տխուր ճակատագրին. «Ազգային մասնավոր կրթություն ստանալու հնարավորությունից զուրկ՝ այդ դժբախտները գիտակցում են միայն, որ հայ են, սակայն կարոտ՝ ազգային և կրոնական կյանքի»[1]:

Փաստորեն, սա վերապրածների երկրորդ սերնդի մեջ ազգային ինքնագիտակցության առկայությունը փաստող լավագույն վկայություններից է: Թերևս ձուլման, ուծացման և այլասերման երևույթներն ավելի քիչ են կշռել, քան սոցիալական բարդություններն ու ֆիզիկական սպառնալիքները:

Շավարշ քահանա Պալըմյանը 1960-ականներին «այցելու քահանայի» կարգավիճակով բազմիցս եղել է գավառահայության մեջ: Այդ առնչությամբ նրա հուշերն ու տպավորությունները «Ու ես կ'երթամ» առանձին հատորով լույս են տեսել Պոլսում 2005թ., ուր չափազանց հետաքրքիր դրվագների կարելի է հանդիպել գավառահայության կյանքի մասին: Այդ հատորից, օրինակ, պարզվում է, որ Էրեյլիում 1963թ. եղել է 10-15 տուն հայ ընտանիք[2]:

Նույն աղբյուրի համաձայն՝ Ուրֆայում էլ նույն թվականներին ապրել են հայեր, ընդ որում՝ նաև մի կույր աշուղ[3]: Վերջինս հավելյալ մի ապացույց է հանրահայտ գրող-հրապարակախոս Յաշար Քեմալի այն արտահայտության, թե «Անատոլիայի ժողովրդական բանաստեղծներից շատերը հայ են … »[4]:

Տիգրանակերտից ոչ հեռու գտնվող Դերիկում ընթացող կյանքը ներկայացնելով հանգիստ ու ազատ՝ հայ ավետարանական Շահեն Մակարյանն այդտեղ համախումբ ապրող 30 հայ ընտանիքների մասին գրելիս մատնանշում է մի կարևոր հանգամանք. «Քաղաքապետը թուրքի հետ ամուսնացած մի հայ կնոջ զավակ լինելով՝ հայերի հանդեպ շատ ազնիվ վերաբերմունք ունի: Այստեղ հայերը շատ հանգիստ և ազատ են ապրում: Քաղաքապետը գյուղի գեղեցիկ և ընդարձակ եկեղեցին հանձնել է հայերին: Քահանա չունեն, բայց եկեղեցին միշտ պահում են մաքուր և լուսավոր»[5]:

«Նոր Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոբեր Հատտեճյանին ուղղած նամակում Ալի Ռեզա Դեմիրոք անունով Թուրքիայի քաղաքացին 1960-ականների իր ծննդավայր Մալաթիայի Չավուշօղլու թաղամասն այսպես է բնութագրում. «Մեր թաղամասի մասնահատկությունն այն էր, որ բնակչության 60 տոկոսը հայեր էին, իսկ մնացած 40 տոկոսը՝ մահմեդական հայրենակիցներ: Մեր տան երկու կողմերում հայեր էին բնակվում: Այս դրացիության պատճառով թաղամասի ժողովուրդը այնպես միաձուլվել էր իրարու, որ

[1] Հայրենիք ամսագիր, 1963, ապրիլ, էջ 80:
[2] Պալըմեան Շ., Ու ես կ'երթամ, Ստամբուլ, 2005, էջ 15:
[3] Նույն տեղում, էջ 72:
[4] Նոր Մարմարա, 1960, սեպտեմբերի 11:
[5] Բանբեր, Փարիզ, 1971, յունուար-փետր., թիւ 1-2, էջ 36:

կարծես դարձել էին միս ու եղունգ»[1]: Մալաթիան հայության կարևոր քաղաքներից մեկն է, ուր Շահեն Մակարյանի վկայությամբ ապրում էր սոցիալապես լավ վիճակում գտնվող «արհեստավորներից և առևտրականներից բաղկացած»[2] 120 հայ ընտանիք:

Շահեն Մակարյանը հարուստ տեղեկություններ է տալիս նաև Փոքր Հայքի և հարակից շրջանների «պաշտոնական» հայության և հատկապես Սեբաստիայի մասին, ուր այդ ժամանակահատվածում ապրում էր մեծ մասամբ առևտրով ու արհեստով զբաղվող 80 հայ ընտանիք: Նա Սեբաստիայի հայության մասին հաղորդում է նաև մի այլ կարևոր տեղեկություն. «Անշուշտ, շրջակայքում և գիւղերում ալ հայեր գտնուում են…»[3]:

«Geographical Magazine» հանդեսի հոդվածագիրը Թուրքիայի հայության մասին 1969թ. պատրաստած իր զեկուցման մեջ բացատրում է, որ գավառներում բնակվող հայերն, անկախ իրենց ցանկությունից, ամբողջ Թուրքիայում ունեն միայն երեք եկեղեցի՝ Դիարբեքիրում, Կեսարիայում և Իսկենդերունում: «Օրինակ՝ Անկարայի 4.000 հայերը,- գրում է հանդեսի հոդվածագիր Ռոբերտ Մեյնքը,- ունենալով հանդերձ նյութական բավարար միջոցներ, չեն կարողանում կառուցել իրենց եկեղեցին»[4]:

Փոքր Հայքի և հարակից շրջանների մյուս քաղաքների վերաբերյալ բուն շապինգարահիսարցի Շահնազար Քեոթահյանը 1969թ. իր ուղեգրական հուշերում գրում է. «…Կանգ առանք Սու-Շեհիր (Էնդիրես), հարցնելով այնտեղ գտանք 90 տարեկան դեռ կայտառ ու շարժուն մի հայուհու, որ քահանայի հարս էր եղել և Եղեռնից հետո հաջողել էր մնալ այնտեղ: Նա էլ իր հերթին մեզ առաջնորդեց ուրիշ հայ ընտանիքի մոտ. բոլորն էլ հայերեն էին խոսում և մեզ ընդունեցին սիրալիր…»[5]:

Նկատելի է, որ Փոքր Հայքի և հարակից շրջանների հայության սոցիալական կյանքն այս ժամանակահատվածում տարբերվել է զուտ ֆեոդալական տնտեսակարգ ունեցող շրջաններից: Ըստ Պոլսի Գատրգյուղ թաղի քահանայ Տ. Մովսեսի՝ «Յոզղաթում գտնվում է 16 հայ ընտանիք: Սրանց մի մասը զբաղված է երկաթագործությամբ, մի քանիսը՝ դերձակությամբ, իսկ մնացածներն էլ բանվորներ են»[6]: Ըստ այս վկայության՝ Փոքր Հայքում և հարակից շրջաններում չկան ճորտական աշխատանքի բացահայտ նշույլներ, որոնք ակնհայտորեն գոյություն են ունեցել Արևմտյան և Հարավարևմտյան Հայաստանում:

Արևմտյան Հայաստանի կարևորագույն քաղաքներից Վանի մասին շատ

[1] Նոր Մարմարա, 2004, յունուարի 27:
[2] Բանբեր, 1970, ապրիլ, թիւ 4, էջ 79:
[3] Նույն տեղում:
[4] Geographical Magazine, London, 1969, March, p. 459.
[5] Նաւասարդ ամսագիր, Լոս Անջելես, 1986, ապրիլ, թիւ 45, էջ 20:
[6] Ալիք, 1962, հոկտեմբերի 14:

քիչ վկայություններ կան։ Վանի վերաբերյալ հատկանշական վկայության ենք հանդիպում «Վարագի» 1964թ. համարներից մեկում, ուր մեջբերումներ են կատարվել լիբանանահայ Առաքել Միքայելյանի՝ «Նայիրիում» տպագրված ուղեգրությունից։ Միքայելյանը, երկար փնտրելուց հետո, հաջողել է մի հայ խանութպանի գտնել Վանում 1960-ականների սկզբին։ Հայախոս խանութպանը «գոցեց փեղկերը և տարաւ տուն,- գրում է նա,- ուր շուտով հաւաքուեցան քանի մը տասնեակ ուրիշ հայեր ալ։ Կիները չէին երեւար, ամօթխած՝ իրենց ճերմակ քողերուն ետեւ, եւ դուրսը, պատուհանէն կը դիտէին։ Բայց երբ սկսանք տաք-տաք խօսիլ, համարձակութիւն առին և կամաց-կամաց ներս եկան։ Բոլորն ալ հայերէն գիտէին, բացի նոր երիտասարդներէն։ *82 հայ ընտանիքներ կապրին Վանին մեջ-* զարմանալի առողջ, կայտառ, կարմիր երեսներով… Հայերը հանգիստ են և քրդերէն շատ սիրված» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[1]։

Էրզրումի հայության մասին ևս շատ չեն ստույգ տեղեկությունները։ Վարդգես Պետրոսյանի ուղեգրություններից մեկում, որը կոչվում է «Կարսից մինչև Տրոյայի ավերակները (Թուրքիա, 1965, սեպտեմբեր…)», ասվում է. «Էրզրումում 100-120 հայ ընտանիք է ապրում»[2]։ Նույն ուղեգրությունից պարզվում է, որ այդ ժամանակ Իգդիրում ապրել են չորս, Կարսում՝ տասնչորս հայ ընտանիքներ[3]։ Նկատի առնելով, որ Պետրոսյանի հաղորդած տեղեկությունները հիմնված են տեղացիների վկայությունների վրա («եկամուտներ ունեցող» մի թուրք, «հյուրանոցի տեր» մի այլ թուրք և այլն), ենթադրելի է, որ մեջբերված թվերը վերաբերում են «պաշտոնական» հայությանը։ Քանզի ենթակայական տարաբնույթ պատճառներով թուրք շարքային քաղաքացիների մոտ գոյություն չունի քրիստոնյա հայից բացի հայի այլ տեսակի ընկալում[4]։

Հայ ավետարանական հոգևոր հայր Հրանտ Կյուզելյանն իր 1969թ. ուղեգրության մեջ առանձին գլուխ է հատկացրել Վարդո աշիրեթին, ուր մանրամասնություններով ներկայացնում է այդ շրջանի հայության համայնքային-սոցիալական իրավիճակը[5]։

Առարկայական ծանր ու դաժան պայմաններում ազգային ինքնագիտակցության պահպանման իրողությունը նկատելի է նաև այստեղ, ուր, ըստ Շահեն Մակարյանի, ապրում են «բոլորովին աննպաստ պայմաններում, շրջապատված մոլեռանդ իսլամ քրդական գյուղերով, դեռ իրենց հայությունն ու հավատքը պահող» հայեր[6]։

Շավարշ քահանա Պալըմյանի վկայությամբ՝ «Այսօր Սասնո լեռներում

[1] Վարագ, Լոս Անջելես, 1964, ապրիլ, թիւ 45, էջ 51։
[2] Պետրոսյան Վ., Հավասարում բազմաթիվ անհայտներով, Երևան, 1977, էջ 169։
[3] Նույն տեղում, էջ 186- 187։
[4] Սա օրինաչափ երևույթ կարելի է համարել հատկապես իսլամական երկրներում, ուր հանրության մոտ նույնիմաստ են նկատվում «հայ» և «քրիստոնյա » հասկացությունները։
[5] Բանբեր, 1969, նոյեմ.-դեկտ., թիւ 11-12, էջ 244- 246։
[6] Բանբեր, 1971, յուն.-փետ., թիւ 1-2, էջ 35։

հարյուր տուն հայություն կա, յուրաքանչյուր տուն 15-30 անդամ ունի, որոնք հարսներով ու թոռներով ապրում են իրենց սեփական կալվածների մեջ»[1]: Նման մի թիվ քիչ թե շատ հաստատում է նաև Շահեն Մակարյանը. «Սասնո մեջ ներկայում հազարից ավելի հայեր կան»[2]:

Նկատելի է ազգային ինքնագիտակցության ու հավաքական կյանքի գիտակցության առկայության փաստը Արևմտահայաստանում ապրող հայության մեջ. «Գավառի մեջ կան այնպիսի հայեր, որոնք իրենց անձնական շահերը անտեսում և հանգիստը զոհում են հանուն եկեղեցու և համայնքի…»,- կարդում ենք Շավարշ քահանա Պալըմյանի տպավորությունների մեջ[3]:

Բնորոշելով Արևմտյան Հայաստանի ֆեոդալական իրավիճակը և այն, որ «գավառի կենցաղն ու ապրելակերպը նախնական են»՝ Շավարշ քահանա Պալըմյանը ակնարկում է մի կարևոր երևույթի մասին, որ հատուկ է հայի ազգային նկարագրին. «Այսօր գավառում աղքատներ ունենք, սակայն մուրացկաններ չունենք»[4]:

Այս ժամանակահատվածում գավառահայության համընդհանուր թվաքանակի մասին ևս ստույգ տեղեկություններ գոյություն չունեն: Ծատուր Աղայանի 1969թ. հրատարակած մենագրությունում, որը ժամանակին ներկայացնում էր ճանաչողական լուրջ արժեք, կարդում ենք. «Թուրքիայի գավառներում ևս, *ոչ լրիվ տվյալներով*, մոտ 500 հազար հայեր կան, որոնք, սակայն, բավականին ծանր պայմանների մեջ են գտնվում: Նրանց մեծ մասը թրքախոս է և աչքի չընկնելու, աշխատանք ճարելու և հալածանքից խուսափելու համար իրեն թուրք է ձևացնում» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[5]: Աղայանի տեղեկատվության մեջ ուրվագծելի են մի քանի նկատառումներ. նախ՝ այն, որ այս ժամանակահատվածում ևս բացակայում են ամբողջական տվյալներ՝ թվաքանակի ճշտորոշման հետ կապված: Հետո, նկատի առնելով թուրքալեզվության և թուրք ձևանալու մասին շեշտադրումը, թվում է, որ Աղայանի նշած թվաքանակը գերազանցապես վերաբերում է «թաքուն» հայությանը: Այնուհետև Աղայանն ակնարկում է «հարյուրավոր» գավառահայերի (ի դեմս հազարավորների) գաղթը Ստամբուլ[6]:

[1] Ալիք, 1963, մարտի 31:
[2] Բանբեր, 1970, յունուար-փետր., թիւ 1-2, էջ 29:
[3] Ալիք, 1963, մարտի 31:
[4] Նույն տեղում:
[5] *Աղայան Ծ.Պ.,* Հայերը Թուրքիայում, Երևան, 1994, էջ 17:
[6] Նույն տեղում:

1971-80 թվականներ

Այս ժամանակահատվածը հատկանշվում է «Գորշ գայլերի» հակահայ գործունեությամբ: Բուն անունով «Ազգայնական շարժում» *(MHP)* ծայրահեղ աջ ցեղապաշտական այս կուսակցությունը գնդապետ Ալփարսլան Թուրքեշի գլխավորությամբ 1969 թվականից հանդիսացել է պանթուրանիզմի ամենահուժկու բազուկը՝ Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության դաշտերը ամեն կարգի ընդդիմությունից ու հակառակորդից մաքրելու գործում:

Կիսազինվորական այս կառույցի «էսկադրոններն» այդ ժամանակահատվածում բուռն գործունեություն ծավալեցին ինչպես թուրք և քուրդ այլախոհ տարրերի, այնպես էլ երկրի և արտասահմանի հայության դեմ: Նշենք, որ միայն 1977-80թթ. թվով երեք ռմբային հարձակումներ են իրագործվել Կ.Պոլսո պատրիարքարանի դեմ[1]:

Հատկապես հայ ազատագրական շարժման նոր զինյալ պայքարի ժամանակաշրջանում «Գորշ գայլերի» կիրառած թուրքացման քարոզարշավների սպառնալիքի ներքո թուրքահայությունը ստիպված ինքն իրեն ներկայացնում էր որպես քրիստոնյա թուրք՝ հայկական ծագումն ու պատկանելությունը քաղաքական հանցանք նկատելով:

Այս կապակցությամբ հետաքրքրական մատնանշում կա պատմաբան Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» արժեքավոր աշխատության մեջ, ուր մեջ է բերվում թուրք պրոֆ. Նեժադի պնդումը, թե «Հայերն առհասարակ իրենց քրիստոնյա թուրքեր են նկատում»[2]: Պատմագիտական և էթնոլոգիական տրամաբանությունից հեռու նման անհեթեթություններով էր հիմնավորվում սույն ժամանակահատվածի հակահայ քաղաքականությունը:

Այդ ժամանակահատվածում թուրքացման քաղաքականությունը, հայկական զինյալ պայքարի հետևանքով ստեղծված մթնոլորտին միախառնվելով, իր ամենագռեհիկ դրսևորումներն էր գտնում: Թեսա Հոֆմանն ու Ժիրայր Քոչարյանն իրենց «Քրիստոնեությունն Արևելքի մեջ, Հայ եկեղեցու կենսավեպը» զեկուցագրում ակնարկում են 1970թ. ի վեր պետական-պաշտոնական հրահանգների ու մեքենայությունների մասին, որոնցով խանգարվում էին պատրիարքարանի հոգևոր, հասարակական և մշակութային միջոցառումներն ու աշխատանքները: «Սրանք բոլորն էլ,- գրում են նրանք, - ուղղված էին նույն նպատակին՝ թուրքացնել և կամ ահաբեկել դեռ վերապրող հայերին»[3]:

1980թ. Երուսաղեմում ունեցած բանախոսության մեջ Շնորհք պատրիարքը, ասելով, որ Մալաթիայում սոցիալապես ապահովված հայեր կան, նշում է.

[1] Ալիք, 1981, հոկտեմբերի 31:
[2] *Կիրակոսյան Ջ.,* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, էջ 445:
[3] Ալիք, 1981, հոկտեմբերի 31:

«նոյնպէս եւ Էլազիզում հայեր կան եւ եկեղեցի ունեն: Տիգրանակերտում հայեր կան, իսկ լսածիս համեմատ՝ Սասնո լեռների վրայ ալ ցրված հայեր կան, որի մասին ժամանակին ձեռքս անցաւ 35 գիւղերի մի անուանացանկ...»[1]:

Այս ժամանակահատվածում Կեսարիայի հոգևոր պետ Սերովբե քահանա Կյուլյանը, որ 1976թ. Ս.Զատկի առթիվ այցելել էր մի շարք քաղաքներ, կարևոր տեղեկություն է տալիս հիմնականում Փոքր Հայքի և հարակից շրջանների հայության մասին, ըստ որի՝ Սեբաստիայում բնակվել են 75, Թոքատում՝ 25, Ամասիայում՝ 30, Գյումյուշհաճըգեոյում՝ 25, Պողազլյանում՝ 30 և Գաստամոնուում՝ 80 հայ ընտանիքներ[2]. մեր համոզմամբ՝ զերազանցապես «պաշտոնական» հայեր:

Քաղաքների ցանկը դեռ կարելի է ընդլայնել՝ ավելացնելով նաև Ամասիան, ուր 1971թ. տվյալներով ապրում էր 300 հայ[3]: Կամ պատմական Գումուշխանեում, ուր 1970-ականների տվյալներով կար 330 հայ[4]: Այնուամենայնիվ, այս ժամանակահատվածի «պաշտոնական» հայության թվաքանակը չունի համապարփակ պատկեր… Նույնիսկ Արևմտյան Հայաստանի սրտում՝ Էրզրումում, ըստ «Ալիք» օրաթերթի, 1973թ. դեռ ապրել են հայեր[5], անշուշտ՝ «պաշտոնական» հայեր:

Եվրոպայի գաղթական աշխատավորների պաշտպան Միջեկեղեցական հանձնախմբի զեկուցագրից պարզվում է, որ սույն ժամանակահատվածի վերջերին (հավանաբար 1975թ. հետո) 20-ից 30 հազար «պաշտոնական» հայեր են ապրել գավառներում[6]:

Շնորհք արք. Գալուստյանն իր՝ 1979թ. տարեկան տեղեկագրում հրապարակում է գավառի ծխատեր քահանաների անվանացանկը և մանրամասներ հաղորդում նրանց հովվապետական վայրերի մասին: Այսպիսով՝ պարզվում է, որ Տ. Ղևոնդ Գարթունյանը Վագըֆ գյուղի հովվապետն է, Տ. Սերովբե Կյուլյանը՝ Ալեքսանդրեթի, Գըրըգխանի, Մերսինի և Ադիյամանի, Տ. Վարագ Պեյլերյանը՝ Դիարբեքիրի, Դերիկի, Մալաթիայի, Խարբերդի և Շիրնակի, իսկ Տ. Բարսեղ Վանլյանը՝ Կեսարիայի, Սվազի, Թոքատի, Ամասիայի, Գյումյուշհաճըգեոյի և Անկարայի հայության[7]:

Պոլսահայ «Ժամանակ» օրաթերթի 1976թ. համարներից վերցված տեղեկությունների համաձայն՝ 120 հոգուց բաղկացած սասունցի 16 ընտանիք ժամանել է Կ.Պոլիս՝ թշվառագույն վիճակում: Արաբկիրում կա 450 անչափահաս երեխա, որոնցից միայն 200-ը հնարավորություն ունի վարժարան

[1] Ալիք, 1980, դեկտեմբերի 18:
[2] Ալիք, 1976, մայիսի 25:
[3] *Հակոբյան Թ.Խ.,* «Պատմական Հայաստանի քաղաքները», Երևան, 1987, էջ 36:
[4] Նույն տեղում, էջ 135:
[5] Ալիք, 1973, սեպտեմբերի 23:
[6] Ալիք, 1980, մարտի 2:
[7] Ալիք, 1980, փետրուարի 9:

հաճախել: Ակնի և շրջակայքի հայ բնակչության թիվը հասնում է 190-ի, որից 40 մանուկներ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից: Դերիկի և շրջակայքի հայերի թիվը հասնում է 200-ի, որոնց մեջ կան մոտ 60 արհեստավորներ[1]:

Շնորհք արք. Գալուստյանը 1977թ. մարտի 26-ին Ստամբուլի համայնքի հետ հանդիպման ժամանակ ասում է. «Մի նոր ձև է ստացել գավառներից ժամանող գաղթականների հարցը: Անցյալ աշնանը Սիլոփիի «Վարդո էրմենի» կոչված գյուղից հասել են, յուրաքանչյուրը երեսունական հոգուց բաղկացած, 15 ընտանիքներ, մոտ 412 հոգի»[2]: Նշենք, որ սույն ժամանակահատվածում արտահոսքեր հաճախ են տեղի ունեցել՝ հատկապես Արևմտահայաստանից:

Արևմտահայաստանում այս ժամանակահատվածում գոյատևած հայության մասին մեկ-երկու հավելյալ վկայություն. լուսանկարիչ Շիրազը (Հովհաննես Ճերեճյան) մի հարցազրույցում պատմում է 1971թ. Իգդիրում իր տեսածի մասին. «Երբ նա (թուրք հյուրընկալը) վստահացավ, որ մենք հայ ենք, ասաց, թե իրենց դրացու տիկինն էլ հայ է…»[3]: Իսկ Սասնո լեռնաստանի մասին հուշերում նա պատմում է. «146 գիւղերով հսկայ մի լեռնաստան է Սասունը, ուր դեռևս 11-ը ամբողջութեամբ հայ են»: Ապա անդրադառնում է բնիկ սասունցի Քեշիշյան տոհմի հետ իր հանդիպմանը. այդ ավանդական ընտանիքի նահապետը խնդրել է նրան, որ իր լուսանկարը հանձնի «հայոց թագավորին» ու կաթողիկոսին և նրանց ասի Սասնո լեռների վրա Քեշիշյան տոհմի հայ մնալու մասին. «Ասկէ ետք,- ասել է նահապետը,- չեմ գիտեր, թէ ինչ կը պատահի այս երեխաներուն հետ… »[4]:

1980-91 թվականներ

Եթե 1960թ. զինվորական հեղաշրջումն առավելաբար միտված էր Ժողովրդավարական կուսակցության գլխավորությամբ կազմված իշխանությունների տապալմանը, ապա 1980թ. հեղաշրջումը, ինչպես ներքին քաղաքական, այնպես էլ տնտեսական, հասարակական և հատկապես արտաքին քաղաքական հիմնական փոփոխություններ առաջացրեց Թուրքիայում: Թուրք վերլուծաբանների կարծիքով՝ գեներալ Քենան Էվրենի գլխավորած կառավարության մեծագույն հիմնահարցերից մեկը Հայկական հարցն էր: «Թերջումանը» 1988թ. հունիսի 28-ի համարում «Մեծագույն հոգսը՝ հայը» խորագրով հոդվածում հաստատելով Հայկական հարցի առաջնային նշանակությունը, ակնարկում է այն կարևոր իրողությունը, ըստ որի՝ «Նախագահ Էվրենը ութ տարուց ի վեր զբաղվում է այս հարցով»[5]:

[1] Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1977, թիվ 1(76), էջ 256:
[2] Ալիք, 1977, ապրիլի 25:
[3] Արմենիա, 1987, ապրիլ, էջ 30:
[4] Նույն տեղում, էջ 31:
[5] Դրօշակ, Աթենք, 1988, օգոստոսի 3, էջ 38:

Այս շրջանում առավել հաշվարկված և համակարգված քայլերով է բնորոշվում Էվրենի գլխավորած կառավարության հակահայ ռազմավարությունը, երբ թուրքացման քաղաքականության փոխարեն առավելաբար վերակենդանացավ իսլամացման հնավանդ քաղաքականությունը:

Աջար գյուղի (Հերենտ՝ Սասունի մոտակայքում) շուրջ 600 հայ բնակչության իսլամացումը 1983թ. ամռանը, կամ 1984թ. աշնանը Ադիյամանի Կերկեր գյուղաքաղաքում 19 հայերի կրոնափոխությունը կարելի է համարել իսլամացման քաղաքականության լավագույն փաստարկ[1]:

«Ջումհուրիեթի» թղթակից Գյուլդեմիրը «Անատոլիայի հայ հայրենակիցները» հետաքրքրական հոդվածաշարում 1981թ. օգոստոսի 12-16-ին հետհեղաշրջման շրջանի շատ թարմ տեղեկություններ է տալիս գավառի հայության մասին[2]: Նա մի շարք «պաշտոնական» և «թաքուն» հայերի հետ հարցազրույցներում հետաքրքիր համեմատությունների և եզրակացությունների է հանգում: Այսպես, օրինակ, նա ասում է, որ եթե Վիրանշեհիրի հայերը դժվարություններ ունեն կրոնական ազատության իմաստով, Մալաթիայում ապրող 20 տուն հայությունը «զերծ» է այդպիսի մտահոգություններից: Մալաթիայի հայերը, ըստ Գյուլդեմիրի, Ադիյամանի հայերի պես միմիայն «աղջիկ առնելու, տալու հարց» ունեն[3]: Այդ հարցազրույցներից պարզվում է նաև, որ 700 տուն հայություն ունեցող Կեսարիայում 1981թ. հազիվ մնացած է եղել 12 տուն, շրջակա գյուղերում ևս մնացել են հայեր:

Ավատապետական հարաբերությունների քայքայման պայմաններում երեկվա հայ ֆլաները այլևս պարտադրվեցին մշակի կարգավիճակով աշխատանքի անցնել քուրդ միջին գյուղացիության մոտ, ինչը մեծապես խոցելի էր դարձնում նրանց՝ հասարակական, կրոնական և մինչև իսկ ֆիզիկական առումով: «Այս քրդերը,- կարդում ենք վերը նշված զեկուցագրում,- հայերին դիտում են որպես խամաճիկներ իրենց թշնամիների՝ աղաների ձեռքում և լավատեղյակ լինելով, որ հայերը դիմադրություն ձեռնարկող չեն, կատարում են ամեն տեսակ ոճրագործություն հայերի հանդեպ՝ առանց որևէ երկյուղի, քանի որ ոչ ոստիկանությունը և ոչ էլ աղաները չեն դիմելու հակամիջոցառման»[4]:

Ահա այդ յուրահատուկ հասարակական հարաբերությունների կացութաձևն էլ իր հերթին բացասական դեր է խաղացել հատկապես քրդաշատ նահանգների հայության արտահոսքի հարցում:

Թուրքահայ մամուլի էջերում հաճախ կարելի է հանդիպել 1960-70-ական թվականներին Մալաթիայում, Սասունում, Սեբաստիայում և այլուր ծնված, 80-ականներին հասարակական կյանք թևակոխած և Ստամբուլում

[1] *Hofmann T.,* Armenians in Turkey today, October 2002, p. 18.
[2] Ալիք, 1981, դեկտեմբերի 9:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

հաստատված հայերի կենսագրականների, որոնք այսպես թե այնպես վկայում են հայության այս որոշակի արտահոսքի մասին՝ արևելյան քաղաքներից և գյուղերից: Ահավասիկ, դրանցից մի քանիսը.

- Հակոբ Չըթաք. ծնվել է 1965թ. Մալաթիայում: Նախնական ուսումը ստացել է Բանկալթիի Մխիթարյան վարժարանում[1]:
- Համբար Աքքայա. ծնվել է 1965թ. Սվազի (Սեբաստիա) Գանգալ գյուղում: Ավարտել է պատրիարքարանի Սուրբ Խաչ դպրեվանքը[2]:
- Մելինե Պեյլերյան. ծնվել է 1958թ. Էրզինջանում (Երզնկա): Ավարտել է «Էսայան» աղջկանց վարժարանը[3]:
- Էդիբ Թեմելջի. ծնվել է 1969թ. Տիգրանակերտում: Ավարտել է պատրիարքարանի Սուրբ Խաչ դպրեվանքը[4]:
- Արամ Դեմիր. ծնվել է 1965թ. Սասունում: Ներկայիս «Ս.Փրկիչ» ազգային հիվանդանոցի հոգաբարձության անդամ է[5]:

Այս ժամանակահատվածում թուրքական «Միլլիեթը» վիճակագրական մանրամասն տեղեկություններ է տալիս «պաշտոնական» հայության մասին (1985թ.), որոնցից պարզվում է, որ հայերի ստույգ թվի գնահատումը 1975թ. սեպտեմբերի 19-ին ընդունված մի օրենքով հնարավոր չի եղել: Ըստ «Միլլիեթի»՝ սույն օրենքը, որ ամրագրված է «անձնագրային վերանորոգում» կոչվող կանոնադրության մեջ, թելադրում էր գործադիր պատկան մարմիններին՝ անձնագրերում չնշել դավանական և համայնքային տեղեկություններ, այլ նշել միայն կրոնական պատկանելությունը (մահմեդական, քրիստոնյա կամ հրեա): «Հակառակ սրան,- գրում էր «Միլլիեթը»,- կատարված մի շարք ստուգումների շնորհիվ և 1980թ. մարդահամարի արդյունքների լույսի տակ (մանրամասնությունները պարզ չեն մեզ- Կ.Խ.) ենթադրվում է, թե ներկայումս վաթսուն հազար հայեր են ապրում Թուրքիայի սահմաններում, որից 45 հազարը՝ Կ.Պոլսում և մնացածը (15 հազարը) ցրված են հետևյալ շրջաններում՝ Հաթա, Իսկենդերուն, Մարդին, Դիարբեքիր, Սիլոպի, Մալաթիա, Սիիրտ, Սվազ, Հաքքիարի, Էլազիգ, Կեսարիա, Գաստամոնու, Յոզղաթ, Ամասիա, Աֆիոն և Ադիյաման»[6]:

Թուրքական «Հյուրգյունը» 1985թ. հոկտեմբերի 26-ին հաղորդեց, որ Շնորհք արք. Գալուստյանը հարցաքննվել է Թուրքիայի դատախազ Իպիշօղլուի կողմից՝ Երուսաղեմից եկած մի քահանայի միջոցով՝ կրոնավոր դառնալու ցանկություն ունեցող դիարբեքիրցի հայ տղաներին Երուսաղեմ տեղափո-

[1] Սուրբ Փրկիչ, 1985, մարտ, 36-րդ տարի, թիւ 425, էջ 3:
[2] Սուրբ Փրկիչ, 1985, նոյեմ., 37-րդ տարի, թիւ 433, էջ 5:
[3] Սուրբ Փրկիչ, 1986, օգոստոս, 37-րդ տարի, թիւ 442, էջ 3:
[4] Նույն տեղում:
[5] Սուրբ Փրկիչ, 2001, յունիս-յուլիս, թիւ 620-621, էջ 9:
[6] Ալիք, 1985, օգոստոսի 22:

խելու գործի կապակցությամբ[1]։ Սույն հարցաքննության արդյունքների մասին թերթը լռում է։ Այլ աղբյուրներից գիտենք, որ այդ քահանան հայր Մանուել Երկաթյանն էր։

Մանուել Երկաթյանի ձերբակալման հետ է զուգորդվում նաև ավետարանական եկեղեցու քահանա պատվելի Հրանտ Կյուզելյանի պարագան, որի դատավարությունը սկսվել է 1981թ. հոկտեմբերի 2-ին։ Էվրենի զինվորական իշխանություններից կախված դատախազը դատարանում շեշտում էր, որ Կյուզելյանը բազմաթիվ «թուրք» որբ տղաների արևելյան նահանգներից Ստամբուլ է բերել և նրանց հայություն քարոզել[2]։ «Նա 20 պատանիներ Դիարբեքիրից և Մարդինից բերել և տեղավորել է Թուզլուի կամպում»,- ասել է դատախազը[3]։

Էվրենյան հակահայ քաղաքականության հետևանքով նոր լիցք է հաղորդվել նաև «պաշտոնական» հայության արտագաղթին։ Հոլանդահայ գաղութի մասին «Ազատ օրի» աշխատակից Նուբար Եսայանի թղթակցության մեջ արտացոլվում են այս արտագաղթի դրսևորումները. «Երեք հազար հինգ հարյուր հայերից մոտ հինգ հարյուրը հաստատված են Ալմելո քաղաքում։ Սրանց ջախջախիչ մեծամասնությունը եկել է Տիգրանակերտի շրջաններից»[4]։

Կիլիկիայի հայությունը, պահպանելով ազգային-համայնքային դրվածքը, այնուամենայնիվ, դիմագրավել է պետականորեն հարուցված դժվարությունների։ Շնորհք արք. Գալուստյանը 1987թ. Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալի հետ վարած իր բանակցությունների մասին հանրությանը բացատրական տալով՝ ակնարկում էր. «Ըսեց նաեւ, որ Քրըքխանի հայոց եկեղեցին իր կալւածներով, տոմարներով եւ դրամներով գրաւեալ է Վագըֆի վարչութեան կողմից, առանց որեւէ պատճառաբանութեան, երբ տեղի վրայ դեռ ունինք 18 հոգանոց հայ համայնք»[5]։

Շնորհք արք. Գալուստյանը 1985թ. մի խումբ հոգևորականների հետ կրկին այցելել է գավառահայությանը։ Այցի վերաբերյալ (Դիվան պատրիարքարանի զեկուցման) որոշ նշումներ կան Կեսարիայի, Խարբերդի, Մալաթիայի, Դիարբեքիրի և Դերիկի հայության մասին[6]։ Այսպես՝ Կեսարիայում 1985թ. եղել է 10-12 հայ, Խարբերդում՝ 30-33 հայ ընտանիք, Մալաթիայում՝ շուրջ 25 հայ ընտանիք և Դերիկում՝ 150 հայ։ Այդ զեկուցագրում հատկանշականն այն է, որ Դերիկի հայության համար շեշտվում է նրանց քրդալեզու լինելու և քրդական տարազ կրելու հանգամանքը[7]։ Այսպիսով՝ կարելի է ընդգծել, որ սույն հարցի խորքում ընկած է «թաքուն» և «իսլամացած» հայության գոյու-

[1] Ալիք, 1985, նոյեմբերի 24։
[2] Ալիք, 1985, նոյեմբերի 24։
[3] Նույն տեղում։
[4] Ալիք, 1985, օգոստոսի 18։
[5] Արմենիա, 1987, ապրիլ, էջ 28։
[6] Ալիք, 1985, նոյեմբերի 25 և 27։
[7] Նույն տեղում։

թյունը հաշվի առնելու գիտակցությունը, որն առավելաբար հատուկ է եղել Շնորհք արք. Գալուստյանին։

Պատրիարքի երրորդ և վերջին այցելությունը գավառահայությանը տեղի է ունեցել 1989թ., որի ընթացքում ի հայտ են եկել նորություններ։ Այսպես՝ Սամսունում գիշերելուց հետո, հունիսի 8-ի առավոտյան, նա անցել է Մերզիֆոն, ապա՝ Գյումյուշհաճըգեռ, ուր բոլոր հայերը, թերևս մի քանիսի բացառությամբ, լավ հայերեն են խոսել ու հասկացել. «15 ընտանիքներ կան այնտեղ, բոլորն էլ կրում են հայկական անուններ։ Ներկայում 12 հայ ընտանիքներ են ապրում Պողազլյանի մեջ, շուրջ 40-50 հոգի»[1]։

Այս ժամանակահատվածի հայության ցրվածությունը պատկերացնելու համար նշենք, որ մինչև իսկ Դերսիմի մոտակայքում գտնվող Խոզաթ (Հոզաթ) և Փերի (Աքբազար) երկու պատմական գյուղաքաղաքներում էլ, ըստ Թ.Խ. Հակոբյանի, գոյություն են ունեցել մի քանի հայ ընտանիքներ[2]։

1991-2005 թվականներ

Այս ժամանակահատվածի բնորոշ շրջադարձն է համարվում Խորհրդային Միության փլուզումը՝ իր բոլոր հարակից հարցերով և հետևանքներով։ Մեր գնահատմամբ՝ փլուզման գլխավոր և առաջնային պատճառներն են մի կողմից՝ խորհրդային համակարգում ազգային-էթնիկական հարցերի առկայությունը, մյուս կողմից՝ տեղեկատվական աշխարհի սրընթաց զարգացումները։

Այս երկու գործոններն են, որ, ըստ մեզ, Խորհրդային Միության փլուզման պատճառ հանդիսանալուց բացի՝ հեղափոխական իրավիճակի մեջ դրեցին բովանդակ տարածաշրջանի իրավազրկված ազգերին և էթնիկական խմբերին՝ իրենց չլուծված կամ թերի լուծված ազգային հարցերի արծարծման և արդար լուծման ուղղությամբ։

Ազգային ինքնաճանաչման համընդհանուր այս զարթոնքը և տեղեկատվական ու հաղորդակցական միջոցների աննախադեպ թռիչքը ճակատագրական նշանակություն ունեցան խնդրո առարկա հայության համար։

Հայության մյուս խմբերի համեմատությամբ՝ «պաշտոնական» հայության ներկա վիճակի մասին առավել շատ տեղեկություններ կան մեր տրամադրության տակ։ Որոշ բացառությամբ նրա վիճակն այսօր ևս շարունակում է մնալ անմխիթար։ «Թայմզ» օրաթերթը 1994թ. ահազանգեց այն մասին, թե Թուրքիայի դեմ մի նոր արշավ պիտի սկսվի՝ պայմանավորված քրիստոնյաների նկատմամբ գործադրվող ծանր ճնշումների իրողությամբ։ Լուրը հաղորդվել է Թուրքիայի արևելյան նահանգներում ապրող քրիստոնյաների առիթով[3]։

[1] Արմենիա, 1989, օգոստոս, էջ 36-37։
[2] *Հակոբյան Թ.Խ.,* Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 147 և 247։
[3] Ալիք, 1994, մայիսի 19։

Ըստ «Թայմզի» թղթակցի, վերջիններն այլևս չդիմանալով ճնշումներին՝ ստիպված լքում են իրենց հայրենի տարածքները։

«Պաշտոնական» հայության շարունակվող արտահոսքին 1994թ. անդրադառնում է նաև պոլսահայ գրող Ռ.Հատտեճյանն իր «Յուշատետրում»՝ առավել ծանրանալով արտահոսքին տոն տվող սոցիալ-տնտեսական պատճառների վրա։ «Գավառի մեջ նրանցից ոմանց համար,- գրում է Հատտեճյանը,- կյանքի պայմաններն անտանելի էին, հողագործությունը բավարար չէր, բազմանդամ ընտանիքները բավականաչափ հող կամ բերք չունեին՝ իրենց ապրուստն ապահովելու համար։ Երիտասարդ այրեր, գավառի մեջ թողնելով իրենց նորապսակ կանանց, Պոլիս էին գալիս՝ զանազան արհեստների մեջ աշխատելու, մինչև իսկ բեռնակրություն էին անում։ Աշխատում էին ու գիշերները կարոտի երգեր երգում իրենց կանանց ու ծննդավայրի համար…»[1]։

«Պաշտոնական» հայության իրավիճակին անդրադառնալու համար կարևոր է ճշտել նրա թվային մոտավոր պատկերը։ Որոշ տվյալների համաձայն՝ 1990-ականների կեսերին Թուրքիայի հայության թիվը հասնում էր 82 հազարի, որից չորս հազարը գավառներում էր ապրում[2]։

1995թ. հրատարակված «Հայերն աշխարհում» համառոտ հանրագիտարանը Թուրքիայի «պաշտոնական» հայության թվաքանակը գնահատում է մոտ 10 հազար[3]։

«Թուրքիայի հայոց համայնքային օրացույցը» 1991թ. համապարփակ մի պատկեր է ներկայացրել Թուրքիայի հայության ազգային կառույցների վերաբերյալ։ Դրա մի բաժնում պարզվում է, որ «Կեսարիայի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կապված են Անկարայի, Ամասիո, Գաստամոնուի, Գյումուշհաճըքեոյի, Յոզղաթի, Պողազլյանի, Սվազի, Թոքատի և *Կենտրոնական Անատոլիայի բոլոր համայնքները*։ Տիգրանակերտի Ս.Կիրակոս եկեղեցուն կապված են Մալաթիո, Էլազիգի, Բիթլիսի, Սասունի և այլ *Հարավարևելյան Անատոլիայի հայ համայնքները։* Իսկենդերունի Ս.Քառասուն Մանկունք եկեղեցուն կապված են Ադիյամանի, Մերսինի և *հարավարևմտյան Անատոլիայի այլ հայ համայնքները» (*ընդգծումները մերն են- Կ.Խ.)[4]։

Սույն քաղաքներում «պաշտոնական» հայության բնակության կապակցությամբ 1998թ. Թուրքիայի հայոց պատրիարքարանի դիվանի զեկուցման մեջ ևս մի կարևոր հաստատման ենք հանդիպում, ուր լայն բացատրություն է տրված նորընտիր պատրիարքի գահակալության հանդիսության վերաբերյալ։ Զեկույցի 4-րդ կետի համաձայն՝ «150 հոգանոց պրոտոկոլի ցանկում» ի թիվս այլոց նկատի էին առնվել «Անկարայի, Կեսարիայի, Ամասիայի, Գաստամո-

[1] Ալիք, 1994, նոյեմբերի 2։
[2] Ալիք, 1994, մայիսի 16։
[3] Հայերն աշխարհում, Երևան, 1995, էջ 45։
[4] Արմենիա, 1991, յունիս, ԺԱ տարի, թիւ 6, էջ 7։

նուի, Գյումուշհաճըքեոյի, Յոզղաթի, Պողազլյանի, Սվազի, Թոքատի, Դիարբեքիրի, Մալաթիայի, Էլազիգի, Բիթլիսի, Սասունի, Իսկենդերունի, Ադիյամանի, Մերսինի հայ համայնքների ներկայացուցիչները, *որոնք հատկապես գահակալության արարողությանը մասնակցելու համար են Ստամբուլ հրավիրվել»* (ընդգծումը մերն է - Կ.Խ.)[1]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայկական «պաշտոնական» համայնքներ այսօր գոյություն ունեն «Անատոլիայի» 17 մարզերում և վարչատարածքներում:

2000թ. Թուրքիայի հայոց պատրիարքի և կրոնի նախկին տեսուչ Լյութֆյու Դողանի շուրջ մեկժամանոց հեռուստազրույցում ևս որոշակիորեն շոշափվում է գավառների հայկական համայնքների խնդիրը և բացատրվում համայնքային դժվարությունների ու քաղաքացիական բարդությունների հարցը: «Այսօր Ստամբուլում ու բովանդակ Թուրքիայում գործող 44 եկեղեցիներ ունենք,- ասում է Մեսրոպ արք. Մութաֆյանը,- սրանից բացի՝ կան 14 համայնքներ ևս, որոնք իրենց ապրած տեղում եկեղեցի չունեն, ինչպես՝ Անկարա, Մալաթիա, Սվազ: Այս կարիքների դիմաց ունենք միայն 25 եկեղեցականներ, որը շատ քիչ է... »[2]:

Ժամանակակից Թուրքիայում հայկական համայնքների մասին կենդանի վկայությունների ու նկարագրությունների ներկայացումը կարող է ավելի առարկայական պատկերացումներ ստեղծել:

Մուսա լեռան 2002թ. ուխտագնացության մասին «Նոր Մարմարայի» թղթակիցը գրում է. «Վազքֆ գիւղի աւանդական հանդիսութեան առիթով ուխտագնացութեան մասնակցեց նաև Ներսէս արք. Պոզապալեանը: Ուխտաւորներ ներկայ էին նաեւ Էլազիգից (Խարբերդ), Մալաթիայից, Սեբաստիայից, Մէրսինից, Ադանայից, Անկարայից, Ադիեամանից և Տիգրանակերտից»[3]:

Քաղաքական, պատմական և աշխարհագրական բազմաթիվ պատճառներով պատմական Կիլիկիան կարելի է համարել «պաշտոնական» հայության ներկա ժամանակների ազգապահպանման միջնաբերդը: Նոսրացման, արտահոսքի և ուծացման վտանգին ենթակա ու պետական խոչընդոտների դեմ մաքառող կիլիկյան համայնքները մեծապես պահպանել են իրենց ազգային դիմագիծը՝ այնքանով, որ կարելի է դրանք համարել Կ.Պոլսի հայության հասարակական-մշակութային կյանքի շարունակությունը: Այդտեղ, բացի համայնքային-ընտրական իրավունքներից, առկա են ազգային-հավաքական կյանքի առողջ նշույլներ: Ահա այդ իրողությունը հաստատող երկու վկայություն.

[1] Ժամանակ, Ստամբուլ, 1998, նոյեմբերի 11:
[2] Նոր Մարմարա, 2000, փետրուարի 5:
[3] Նոր Մարմարա, 2002, օգոստոսի 19:

- «Պատրիարք Սրբազանը ժամանեց Վագըֆ գիւղ, որի մուտքի մօտ Պատրիարքն ու ուղեկիցները դիմաւորուեցին թմբուկ-զուռնայով եւ պարմանների ու պարմանուհիների պարերով, մի տեսարան, որ յուզիչ էր։ Ամէն մարդ հայերէն էր խօսում, երգւում էին տոհմիկ երգեր ու եղանակներ»[1]։
- Կամ. «Ադանայի Հայոց հետ հանդիպում... Պատրիարք Հայրը այստեղ մեծ ուրախութեամբ դիմաւորուեց տեղի կաթոլիկ վարդապետի և զոյգ մայրապետերի կողմից, որոնք Նորին Ամենապատուութեան այցելութեան առիթով հրաւիրել էին ադանացի հայերին։ Հաւաքված էր հայերից շուրջ քսանհոգանոց մի խումբ, բոլորն էլ հայկական անուններով...»[2]։

Պատրիարքի 2002թ. Մերսին քաղաք այցելության ընթացքում տեղի Կաթողիկե եկեղեցու պետ Հայր Գրեգորիո Բրունո Սիմոնելլին, իր տված քարոզում դիմելով պատրիարքին՝ ասում է. «Տարին զոնէ մէկ անգամ գալիս էք մեր քաղաքը եւ չափազանց ուրախութիւն էք պատճառում ոչ միայն *տեղացի հայ հաւատացեալներին*, այլ նաեւ քաղաքիս բոլոր քրիստոնեաներին» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[3]։

Թվում է, թե մշակութային կյանքը Կիլիկիո համայնքներում ընթանում է քիչ թե շատ բնականոն։ Վագըֆ գյուղի նորաշեն եկեղեցու պարտեզում Արամ Խաչատրյանի 100 ամյակին նվիրված հանդիսության կապակցությամբ պատրաստված լրատվության մեջ ասվում է. «Եկեղեցին եւ բակը ծայրէ ծայր լեցուն էր գիւղացի հաւատացեալներով. ներկայ էին բազմաթիւ ուխտաւորներ՝ Մերսինից, Ադանայից, Իսկենդերունից, Անտիոքից, Սամանդաղից»[4]։

Այս և բազմաթիվ այլ պատճառներով Վագըֆ գյուղը բացառիկ դիրք է գրավում։ Այն հարուստ մանրամասնությամբ է բնութագրում օտարազգի հետազոտող Ժոլիոն Նաեգլեն։ Ըստ նրա՝ գյուղն էթնիկական իմաստով միատարր է, և միայն մեկական թուրք և քուրդ ընտանիքներ են բնակվում այնտեղ, եկեղեցին հիմնական վերանորոգման է ենթարկվել իսլամիստ Ռեֆահ (Բարօրություն) կուսակցության իշխանության օրոք, և բնակիչները, հանրային վայրերում թուրքերեն խոսելով հանդերձ, լավ են տիրապետում մայրենի լեզվին և ընտանեկան միջավայրերում հայերեն են խոսում և այլն, և այլն։ «Հայկական համայնքը Վագըֆում,- ըստ բուն վագըֆցի Պետրոս Քեհիրօղլուի՝ նշում է Ժոլիոն Նաեգլեն,- վայելում է հարյուրտոկոսանոց ավտոնոմիա»[5]։

Իսկ ազգային գիտակցության պահպանման կենսական անհրաժեշտության վերաբերյալ Պետրոս Քեհիրօղլուն հայտնել է Ժոլիոն Նաեգլեին, որ «չի

[1] Նոր Մարմարա, 1999, ապրիլի 1։
[2] Ժամանակ, 2000, ապրիլի 4։
[3] Նոր Մարմարա, 2002, օգոստոսի 20։
[4] Նոր Մարմարա, 2003, սեպտեմբերի 30։
[5] *Naegele J.,* Turkey:Village survived the century's first mass ethnic expulsion, 27 May 1999.

կարելի վստահել այն անձնավորությանը, որն ուրանում է իր ինքնությունը…»[1]:

Կիլիկիայի այս համայնքներում առկա է նույնիսկ համեմատական որոշ կազմակերպվածություն (թաղային խորհուրդ և այլն): Ահա երկու վկայություն.

- «Պատրիարք հայրն ու ուխտավորները երեկոյան ժամը 4-ին ժամանեցին Իսկենդերունի Սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցին, որի մուտքի մոտ դիմավորվեցին թաղային խորհրդի ատենապետ և Ս.Խաչ դպրեվանքի սան Հովհաննես Սիլահլրի, մյուս թաղականների և տեղացի մի խումբ հայ հավատացյալների կողմից»[2]:
- «Մարտի 29-ի շաբաթ կեսօրից հետո պատրիարքը ինքնաթիռով հասավ Ադանա և պատվո սրահի մեջ դիմավորվեց Լևոն և Էմել Էրարսլանների (Ադանայից), Կարպիս Քըսատուրի և Խոսրով Քեօլեդավիթօղլուի (Իսկենդերունից) և Պետրոս Շիշմանյանի (Վագըֆ գյուղից) կողմից»[3]:

Հակառակ այս իրողությանը՝ ներկայումս Փոքր Հայքի և հարակից շրջանների «պաշտոնական» հայության վիճակն այնքան էլ մխիթարական չէ: Լրատվություններից պարզվում է, որ ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով այս տարածքի համայնքները լուրջ նահանջ են ապրում: «Նոր Մարմարայում» կարդում ենք. «Շաբաթ առաւօտեան արարողութեան ներկայ գտնուելու համար հայեր ժամանեցին նաեւ Սւազից (ուր դեռ 115 հայեր են ապրում) եւ Պողազլեանից…»[4]:

Նկար 1

Սեբաստիայի «պաշտոնական» հայ բնակչության հոլովույթն՝ ըստ թվականի



«Պաշտոնական» հայության արտահոսքի քանակական չափերը բնորոշելու համար Սեբաստիայի օրինակը գտնում ենք նպատակահարմար, քանզի ըստ հաջորդական ժամանակահատվածների՝ տեղի հայ բնակչության մասին

[1] Նույն տեղում:
[2] Նոր Մարմարա, 2002, օգոստոսի 21:
[3] Նոր Մարմարա, 2003, մարտի 3:
[4] Նոր Մարմարա, 2001, մարտի 27:

մեր տրամադրության տակ կան նախապես ակնարկված բավարար տվյալներ, որոնք Սեբաստիայի «պաշտոնական» հայության հոլովույթի մոտավոր պատկերը կազմելու հնարավորություն են տալիս *(Նկ.1)*:

Ենթադրում ենք, թե առհասարակ Փոքր Հայքի և հարակից շրջանների «պաշտոնական» հայության արտահոսքը նման մի հոլովույթ ունի:

Կեսարիայի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որ 50-ականներին «պաշտոնական» հայության հոգևոր կենտրոնն էր, ուր բազմամարդ հավատացյալների մասնակցությամբ կատարվում էին արարողություններ, այժմ գտնվում է հուսահատ պայմաններում. 2003թ. փետրվարի 9-ին, «երեկոյեան ժամը 5-ին Կեսարիայի Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում,- կարդում ենք «Նոր Մարմարայում»,- երեխայից սուրբ պատարագ մատուցեց պատրիարք Հօր միջոցաւ եւ Արգէոս սարից վերադարձող երիտասարդներուն ու նաեւ Կեսարիա-Կապադովկիայում բնակւող մէկ քանի հայերու մասնակցութեամբ»[1]:

Այս եկեղեցու և Կեսարիա քաղաքի ռազմավարական նշանակության մասին այսպես է գրում նաև Կ.Պոլսի (կամ Թուրքիո հայոց) պատրիարքարանի պաշտոնաթերթ «Լրաբերը». «Հայ եկեղեցու համար կարևոր ուխտատեղի է այս քաղաքը և հատկապես քաղաքի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որ կեդրոնական Անատոլիայի պաշտամունքի բանուկ միակ հայ եկեղեցին է»[2]:

Թղթակցություններից կռահելի է դառնում Փոքր Հայքի և հարակից շրջանների «պաշտոնական» հայերի ցրվածության չափը. օրինակ՝ «*Գաստամոնուի* կենտրոնի մեջ այսօր բնակվում են 12 հայ ընտանիքներ, ընդամենը 40 անձ,- դարձյալ կարդում ենք «Նոր Մարմարայում»,- իսկ *Թաշքեուիրովում* բնակվում են 11 հայ ընտանիքներ, ընդամենը 37 անձ»[3] (ընդգծումները մերն են- Կ.Խ.)[4]: Կամ՝ պատրիարքարանի հրապարակած «Եկեղեցականք-պաշտոնականքում» կարդում ենք. «Սեպտ. 26, Ուրբ.- Նորին Ամենապատվությունը *Գոնիայում* ժամը 10-ին ուխտի այցելություն տվեց Ս.Պողոս կաթողիկե եկեղեցուն, ուր նախագահեց երեխայից սուրբ պատարագին: Ավարտին Նորին Ամենապատվությունը հանդիպում ունեցավ տեղի կաթողիկե կրոնավորների և *Հայ Առաքելական եկեղեցու անդամների* հետ» (ընդգծումները մերն են- Կ.Խ.): Ժաքլին Չելիքը, որ վերջերս շրջագայել է Անատոլիայի 50 քաղաքներում, ուսումնասիրել է այդ շրջանների հայկական և հունական եկեղեցիները, տալիս է շատ անմիջական տեղեկություններ հատկապես Փոքր Հայքի և հարակից շրջանների հայության մասին: «Ուր կ'երթա,- գրում է «Մարմարան» նրա շրջագայության մասին 2005թ. օգոստոսի 4-ի համարում, - ան կը գտնէ նաև հայ մը», ինչպես Սվազի Թավրա գյուղում՝ Երվանդ Տուրմազկյուլերին, Օրդու քաղաքում՝ Հարություն Վարպետին և այլն[5]:

[1] Նոր Մարմարա, 2003, փետրուարի 17:
[2] Լրաբեր, Ստամբուլ, 2004, յունիսի 26:
[3] Նոր Մարմարա, 2003, սեպտեմբերի 20:
[4] Նոր Մարմարա, 2003, հոկտեմբերի 4:
[5] Նոր Մարմարա, 2005, օգոստոսի 4:

Քրդաշատ Հարավարևմտյան Հայաստանում հայ համայնքները գտնվում են գրեթե նույն վիճակում, թեև այնտեղ «պաշտոնական» և «թաքուն» հայերին զանազանող սահմաններն ավելի առաձգական են և անորոշ: Ի տարբերություն «թաքուն» հայության, «պաշտոնական» համայնքներն այնտեղ էլ են նոսրանում: Պատրիարքարանի Կրոնական ժողովի 1998թ. վերջին նիստի մասին մամուլում հրապարակված հայտարարության մեջ կարդում ենք. «Դիարբեքիրից դեպի Պոլիս գաղթը շարունակւեց վերջին ամիսներում ևս՝ պատմական այդ քաղաքի մէջ թողնելով միմիայն 6 հայեր»[1]:

Տիգրանակերտի պարագայում էլ, Սեբաստիայի օրինակով, կարելի է կազմել բնակչության հոլովույթի մոտավոր պատկերը *(Նկ. 2)*:

Նկար 2

Տիգրանակերտի «պաշտոնական» հայ բնակչության հոլովույթը՝ ըստ թվականի



Տիգրանակերտի հայաթափումը չի վրիպել նույնիսկ այլազգի հետազոտողի քննական հայացքից. «Դիարբեքիրում,- զեկուցում է Նատալի Տոչչին 2001թ.,- ուր մի ժամանակ ապրում էին 250 հազարից ավելի հայեր, այսօր ապրում են փոքր թվով հայ ընտանիքներ միայն: Եկեղեցու մոտ էր գտնվում ծերունու տունը և մի փոքրիկ մատուռ, որը դեռևս օգտագործվում էր քաղաքում մնացած փոքր թվով հայ ընտանիքների կողմից»[2]:

Տիգրանակերտի «պաշտոնական» հայ բնակչության հոլովույթի պատկերը համեմատելով Սեբաստիայի համապատասխան պատկերի հետ և հաշվի առնելով Թուրքիայի քաղաքային բնակչության պատկերը[3] *(Նկ. 3)*՝ կարելի է ասել, որ 1960-ականներին Տիգրանակերտի հայ բնակչության ժամանակավոր աճը հետևանք է եղել շրջակա գյուղերից դեպի քաղաք արտահոսքի: Երևույթի գլխավոր պատճառը գյուղատնտեսական պայմանների վատթարացումն էր,

[1] Նոր Մարմարա, 1998, դեկտեմբերի 31:
[2] *Tocci N.,* Our future southeastern turkish frontiers, CEPS Policy Brief No 6, Oct. 2001, p. 3.
[3] *Oehring O.,* Human Rights in Turkey, Secularism, Religious Freedom, 2002, missio order no 600 215, p. 2.

որը, ինչպես տեսանք, առավել մեղմ դրսևորում է ունեցել Փոքր Հայքի և հարակից շրջանների՝ մանր արհեստով և առևտրով զբաղվող հայ համայնքներում: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն Փոքր Հայքի և հարակից շրջանների, Հարավարևմտյան, հավանաբար նաև Արևմտյան Հայաստանում հայ գյուղացիության թիվը քաղաքային բնակչության համեմատ ավելի մեծ է եղել:

Նկար 3

Թուրքիայի քաղաքային բնակչության պատկերը



Ամեն դեպքում, «պաշտոնական» հայության արտահոսքը երկու տարածքներում էլ ակնհայտ է դառնում 1970-ականներից սկսյալ:

Տիգրանակերտի մոտակայքում գտնվող Դերիկում էլ, ուր նույնիսկ պաշտոնապես գրանցված գործող եկեղեցի կա, վիճակը, բնականաբար, նույնն է. «Ամեն. Ս. պատրիարք Հայրը,- «Նոր Մարմարային» են հաղորդում պատրիարքարանից,- ավարտեց իր շփումները Տիգրանակերտում և 14 սեպտեմբերի 2002-ի շաբաթ առավոտյան իր ընկերակիցների հետ ուղևորվեց դեպի Մարդինի Դերիկ գյուղաքաղաքը: Պատրիարք Հայրը առաջնորդվեց կառավարական շենք, ուր քաղաքավարական այցելություն տվեց Դերիկի գավառապետ Մուստաֆա Ունադրին: Գավառապետը բացատրեց Դերիկի մասին՝ հայտնելով, թե այս գյուղաքաղաքում *փոքրաթիվ հայ ընտանիքներ են բնակվում»* (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[1]:

Մալաթիայում էլ պատկերը մխիթարական չէ: Թուրքական հարցերով փորձագետ Հայկարամ Նահապետյանի համոզմամբ՝ այժմ այնտեղ ապրում է ընդամենը 10 հայ[2], որոնց մասին երբեմն լսվում են արտառոց լուրեր, օրինակ. «Մալաթիացի մի հայ սիրարկածի զոհ…»[3] և այլն: Սակայն ստացված այլ տեղեկությունները վկայում են, որ այնտեղ բնակվող «պաշտոնական» հայերի

[1] Նոր Մարմարա, 2002, սեպտեմբերի 19:
[2] *Նահապետյան Հ.,* Հայլուրի համար, Երևան, 2004, յուլիս:
[3] Նոր Մարմարա, 2003, մարտի 1:

թիվն ավելին է: Կ.Պոլսի պատրիարքին տված այցելության ժամանակ, 2005թ. մարտի 12-ին Մալաթիայի հայության պատվիրակությունը՝ Հարութ Կուրումլուի և Կարապետ Ջեկեմի գլխավորությամբ, պատրիարքին հայտնում է Մալաթիայում դեռ բնակվող 40 հայ ընտանիքների գոյության մասին[1]: Էլեկտրոնային լրատվացանցերի՝ 2006թ. օգոստոսի 26-ին հաղորդած տեղեկությունից պարզվում է, որ Մալաթիա քաղաքում մնացած 30 հայ ընտանիքները դիմում են կատարել իրենց եկեղեցին վերաբացելու խնդրանքով[2]:

Խարբերդը, սակայն, մինչ օրս շարունակում է գոյատևել որպես համեմատաբար կայուն «պաշտոնական» համայնք՝ Հարավարևմտյան Հայաստանում: Երկրաշարժի հավանական վնասների մասին տեղեկանալու նպատակով պատրիարքը 2004թ. օգոստոսի 11-ին կապվել է Էլազիգի (Խարբերդ) հայ համայնքի ներկայացուցիչների հետ և տեղեկացել, որ «*38 ընտանիքներից բաղկացած տեղի համայնքը* չի վնասվել շարժի հետևանքով» (ընդգծումը մերն է- Կ.Խ.)[3]:

Տեղեկությունների հանրագումարը ցույց է տալիս «պաշտոնական» համայնքների նոսրացման ընդհանուր ուղղվածությունը: Այս հարցի կապակցությամբ պետք է ընդգծել մի կարևոր հանգամանք. ի տարբերություն «իսլամացած» և «թաքուն» հայության՝ «պաշտոնական» հայությունը, ազգային-կրոնական կյանքի խիստ սահմանափակումների պայմաններում (ըստ պաշտոնական հայտարարությունների՝ գավառներում գործում է ընդամենը վեց եկեղեցի[4], և, իհարկե՝ ոչ մի հայկական դպրոց) ստիպված է եղել գաղթել Ստամբուլ: Առերևույթ այս արտահոսքը թվում է «ինքնակամ» և ոչ բռնի, սակայն դրան տոն տվող իրական մղիչներն, անշուշտ, պիտի փնտրել պետականորեն ստեղծված սահմանափակումների և տեղական իշխանությունների կողմից հարուցված համայնքային և հասարակական դժվարությունների մեջ: Հանգամանք, որ ավելի քիչ է պատճառ դարձել «իսլամացած» և «թաքուն» հայության արտահոսքի:

«Պաշտոնական» հայության ցրվածության պատկերը որոշակիացնելու մտադրությամբ օգտագործվել է համացանցային մի նոր հնարավորություն, որի գիտական արժեքը մեթոդաբանական դիտանկյունից քննարկման և ուսումնասիրության է կարոտ: Մինչ այդ, սակայն, կիրառելով *ICQ* կոչվող, «թղթատար» *(messenger)* տեսակի համացանցային ընտանիքին պատկանող ծրագիրը՝ կարելի է ուշագրավ արդյունքների հանգել: Ի տարբերություն մյուս ծրագրերի՝ *ICQ*-ի «Հանրային որոնում» *(People search)* բաժինը տալիս է մի բացառիկ կարելիություն, այն է՝ հասցեներ որոնել ինչպես բնակության երկրի

[1] http://www.geocities.com/cryptoarmenians/MalChurch.html

[2] http://www.pressbox.co.uk/detailed/Arts/Armenians_in_Malatya_soon_to_demand_the_reopening_of_the_church_79067.html

[3] Ժամանակ, Ստամբուլ, 2004, օգոստոսի 12

[4] http://www.hyetert.com/rehber.asp.

և քաղաքի, այնպես էլ՝ լեզվական նախասիրության հիման վրա։ Այսպիսով, հնարավոր է դառնում գտնել, օրինակ, Թուրքիայի Արդվինի մարզում բնակվող այն անձանց համացանցային հասցեները, ովքեր իրենց լեզվական նախընտրությունների եռյակ ցանկում նշել են նաև հայերենը։ Այս նոր մեթոդով 2005թ. փետրվարի որոնումներից պեղվել է հայերեն լեզվին ծանոթ մարդկանց համացանցային հասցեների քանակը՝ մեզ հետաքրքրող տարածքներում, որոնք կարելի է ամփոփել հետևյալ քարտեզում *(Նկ. 4)*։

Նկար 4

ICQ-ից ստացված հայախոսների հասցեների ցրվածության քարտեզ



Տվյալներից ու քարտեզից եզրակացվում է, որ Արևմտյան Հայաստանի կենտրոնական մասերում (Տրապիզոն, Էրզրում և Ռիզե) հայախոսների կամ, առնվազն, հայերեն իմանալու հավակնություն ունեցողների մեծ թվով հասցեներ կան։ Մալաթիայի, ինչպես նաև Կիլիկիայի, Փոքր Հայքի և հարակից շրջանների արևելյան և արևմտյան շրջանների պարագայում ևս նման վիճակ է տիրում։

Գավառներից Կ.Պոլսի Ս.Խաչ դպրեվանք բերված սաների թվաքանակի պատկերն[1] ըստ ծննդավայրի կարող է նույնպես նպաստել Հարավարևմտյան Հայաստանում, Փոքր Հայքում և հարակից շրջաններում «պաշտոնական» հայ բնակչության ցրվածության պատկերի որոշակիացմանը *(Նկ. 5*-ում տեղանվան կողքին, փակագծի մեջ, նշվել է բերված սաների թվաքանակը)։

[1] Այս տվյալները ձևավորել ենք Ս.Խաչ դպրեվանքի կայքէջում (http://www.surphac-tbrevank.org/sht/okul/arama.asp) նշված սաների կենսագրությունները քննարկելու արդյունքում։

Նկար 5



Հոգեմտավոր ստեղծագործության համատեքստում կարելի է նշել մի շարք «պաշտոնական» հայ գրողների անուններ, որոնք իրենց գյուղագրական վեպերում, վիպակներում ու պատմվածքներում կենդանի պատկերներ տալով գավառահայ կյանքից՝ ճոխացնում են մեր պատմագիտական տեղեկությունները։

Այս իմաստով արդեն մեջբերումներ կատարել ենք Մկրտիչ Մարկոսյանի երկերից։ Նա ծնվել է Տիգրանակերտում 1938թ.[1]։ Լրացման կարգով ասենք, որ նրա՝ ֆրանսահայ գրողների ընկերակցության գրական մրցանակին արժանացած «Գեաւուր մահալեսի» թուրքերեն հատորում ևս մանկական հուշերի միջից հավելյալ պատկերներ են փոխանցվում ընթերցողին Տիգրանակերտի 1940-50-ականների հայության հասարակական կյանքի մասին։

Գեղամ Սևանը (1926-91թթ.) «Հայոց թաղը» (Երևան, 1967) և «Երեք սերունդ» (Երևան, 1974) երկերում նույնպես կենդանի տեղեկություններ է տալիս 1940-ականների վերջերի գավառահայության հասարակական կյանքի վերաբերյալ, որին ծանոթացել է զինվորական ծառայության ժամանակ։

1933թ. Թոքատում ծնված Հակոբ Արսլանյանի «Դարաւոր այս ծառին արմատներ թող դալար մնան» պատմվածքում («Նոր Մարմարա», 1992) հետաքրքիր պատկերներ կան Սեբաստիայի հայության 1950-ականների կյանքի,

[1] *Տէմիրճյան Ս.Ծ.,* Սփիւռքահայ արդի գրականութիւն, հատ. Ա, Միչիգան, 1994, էջ 513։

հույզերի ու մաքառումների մասին[1]:

Այստեղ կարելի է հիշել նաև 1938թ. Վագըֆ գյուղում ծնված Արսեն Ճանյանին, որի հայրենակարոտ քերթվածներում գեղարվեստական հարուստ ու սահուն ոճով ներկայացվում է գավառը[2]:

Նորայր Տատրյանի «Մատաւաս գիւղը» պատմվածքում («Նոր սան», 1991) հետաքրքրական մանրամասնությամբ են պատկերվել Բիթլիսի մոտակայքում գտնվող և մի քանի տարի առաջ հայությունից պարպված Մատավաս գյուղի բնակարանները, ամայացած դաշտերն ու փողոցները[3]:

Այս շարանին կարելի է ավելացնել նաև այլ անուններ ու երկեր, որոնց ամբողջությունը Թուրքիայի Հանրապետությունում (Արևմտյան Թուրքիայից բացի) գոյատևած «պաշտոնական» հայության հոգեմտավոր հարստությունն է:

Եզրակացություն

Դատելով հիշատակված աղբյուրների տվյալներից՝ «պաշտոնական» հայության թվաքանակը նշված տարածքներում 70-75 տարվա ընթացքում շուրջ 150.000-ից իջել է չորս-հինգ հազարի *(Նկ. 6)*: Սակայն եթե գոյություն ունենային կյանքի բնականոն պայմաններ, ապա տարեկան չափավոր աճի դեպքում (1.2 տոկոս) ներկայումս գավառներում «պաշտոնական» հայության թիվը պիտի լիներ առնվազն 350.000:

Նկար 6

«Պաշտոնական» հայ բնակչության հոլովույթն՝ ըստ թվականի



Ակնհայտ թվային այս դեֆիցիտը չի դրսևորվում Կ.Պոլսի կամ արտասահման գաղթած թուրքահայության համընդհանուր թվաքանակում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ «պաշտոնական» հայության մի մասն է արտագաղթել, իսկ նրա կարևոր մասն էլ «թուրքացել», «քրդացել» կամ առերևույթ ուծացվել ու կրիպտո-հայի՝ «թաքուն» հայի կարգավիճակով շարունակել է գոյատևել մեր ուսումնասիրության առարկա տարածքներում:

[1] Նույն տեղում, էջ 424-426:
[2] Նույն տեղում, էջ 509:
[3] Նույն տեղում, էջ 434-436: